



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ
ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

ՅԵՕՐԷՆ-ԽՄՐԱԳԻՐ
ԶԱՐՄԱՅՐ ՔԱՀԱՆՍՅ ԿԵՋԻԻՐԵԱՆ

Բ. ՏԱՐԻ

« ՇԱՐԱՐ 30 ՅՈՒԼԻՍ 1911 »

ԹԻԻ 29

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԽՆԴԻՐ, ԱՌԱՋԻՎԱԿ ԸՆԴՈՒՅՑԵԼԹԵԱՆ
առթիւ

Փառքը եւ սկզբունքը Հայ կնոջ համար

ՀՈԳԵԻՈՐ ԿԵԱՆՔԻ — Հոգին ու մարմինը

ՄԱՏԵՆԱԽՈՍԱԿԱՆ. — «Հայոց եկեղեցին» Օրմանեան Ս.ի

ԱՍՈՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ. — Ս. Եփրեմ (Գ.)

ՅՈՒԼԻՍ ԵՒ ՊԱՄՓԻԼԻՍ. — Առաջին Գրիստոնեա-

նեցի ժամանակուան պատմութիւն (Շար.)

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ. — Շաբաթուան կարեւոր լուրեր

ԱՐՇԱԿ Ա. ԱԼՊՈՅԱՃԵԱՆ

ԳԱԶՐԻԿ

ԳՐԻԳՈՐԻՍ

ԲԱՐԳԷՆ ԵՊԻՍԿՈՊՍ

Գ. ԳԱՊՊԷՆՃԵԱՆ

ԼԵՈՆ ԹՈԼՍՏՈՅ



« ՏԱՃԱՐ »-ի թէ՛ վարչական եւ թէ՛ խմբագրական գործերուն համար պէտք է
գործել առ Զարմայր Քահանայ Կեղիւրեան, Կ. Պոլիս, Պեշկէքաւ, Հայոց եկեղեցի:

بشيكطاش ارمنى كليسا سنده « داجار » غزتهسى مدبرى پاپاس زارماير افندى

Rev. Père Zarmair Guézurian, Rédacteur de la Revue «DADJAR»
Constantinople, Béchiktache, Eglise Arménienne.

“ՏԱՃԱՐ”Ի

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ եւ Գաւառաց՝ տարեկան	40 դրոց
Արսասահմանի համար	» 10 ծրանք
Ռուսիա	» 4 ռուբլի
Ամերիկա	» 2 օտլար
Ձեռքէ կը ծախուի պահքը	40 փարա

Հինգ բաժանորդ գանձողը իրաւունք ունի մէկ թերթ ձրի ստանալու

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆԵՐ ԿԱՆԽԻԿ ԵՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ Կ'ԸՆԴՈՒՆՈՒՆ ԴԻՒՐԱՄԱՏՁԵԼԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ

ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՔ

«ՏԱՃԱՐ» ԿՐՕՆԱԹԵՐԹ

ԱՆԴՐԻԱՆՈՒՊՈԼԻՍ. — Առաջն. փոխա-
նորդ Տ. Արսէն Բհնյ. Դիրձակեան
ԱՂԵՔՍԱՆԻՐԻՍ. — Տ. Ռուբ, Բհնյ. Դա-
բիկեան
ԱՄԵՐԻԿԱ. — Առաջն. փոխանորդ Տ. Պո-
ղոս Վրդ. Գաֆթանեան
ԱՅՆԹԱՊ. — Տ. Դարեղին Բհնյ. Պօղար-
եան
ԱՖԻՕՆ ԳԱՐԱՀԻՍԱՔ. — Տ. Պաշտառու-
ր Ա. Բհնյ. Տօնէլեան
ԲԱՐԵԴԴ. — Մ. Սանոսեան էֆ.
ԳԱՂԱՏԻԱ. — Առաջնորդ Տ. Բարդէն Եպս.
Կիւլէսէրեան
ԳԱՀԻՐԷ. — Տ. Յարութիւն Բհնյ. Սար-
գիսեան
ԵՕԶՂԱՏ. — Առաջնորդ Տ. Խորէն Մ. Վրդ.
Դիմաքսեան
ԵՐԶՆԿԱ. — Տ. Մարոպ Բհնյ. Թորոսեան
ԶՄԻՒՆԻԱ. — Տ. Յարութիւն Բհնյ. Տ.
Սարգսեան
ԷՍԿԻՇԷՀԻՐ. — Տ. Դալուստ Բհնյ. Տ.
Դալուստեան
ԿԱՐԻՆ. — Առաջնորդ Տ. Ամբաս Եպիսկ.
Սաաթեթեան
ԿԻՐԱՍՈՆ. — Մաթոս էֆ. Թաքառեան
ԿԻՒՄԻՒԼՃԻՆԷ. — Տ. Ներսէս Բհնյ.
Նշանեան

ՄԱՐՍԵ. — Տ. Հմայեակ Բհնյ. Վարժա-
պետեան
ՄԱՐԶՈՒԱՆ. — Յակոբ էֆ. Սրապեան
ՆԻԿՈՄԻԴԻԱ. — Տ. Ոսկի Բհնյ. Պիպիեան
Շ. ԴԱՐԱՀԻՍԱՐ. — Տ. Նաթան Բհնյ.
Տառեան
ՈՒՇԱՔ. — Կարապետ էֆ. Բէհեանեան
ՊԱՆՏՐՄԱ. ՊԱՂԸՔԷՍԻՐ. — Առաջնորդ Տ.
Կարապետ Եպիսկ. Մաղլըմեան
ՊԱՂՏԱՏ. — Առաջնորդ Տ. Մովսէս Ա.
Եպիսկ. Կէօմրիւքեան
ՌՈՒՍՃՈՒՔ. — Տ. Մկրտիչ Բհնյ. Մըրջ-
նիկեան
ՌՈՏՈՍԹՕ. — Առաջնորդ Տ. Դէորդ Մ.
Վրդ. Ասլանեան
ՍԱՄՍՕՆ. — Առաջնորդ Տ. Սահակ Մ. Վ.
Օտապաշեան
ՍԵՐԱՍՏԻԱ. — Առաջն. փոխանորդ Տ.
Թէոփիլէ Բհնյ. Օտապաշեան
ՍԵԼԱՆԻԿ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Կարա-
պետ Բհնյ. Թուխմանեան
ՏԱՐՏԱՆԷԼ. — Տ. Դիոնեսիոս Բհնյ. Տրէզ-
եան
ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ. — Դաւիթ էֆ. Մովսէս-
եան
ՏԻՄԷԹՕԳԱ. — Տ. Դէորդ Բհնյ. Թէրզեան
ՓԱՐԻԶ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Վառձա-
պետ Բհնյ. Քիպարեան
ՔՂԻ. — Առաջնորդ Տ. Պսակ Վրդ.
ՖԻԼԻՊԷ. — Տ. Տաճատ Բհնյ. Դերձակեան
ՖՐԷՋՆՕ. — Յակոբ էֆ. Նշկեան



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԿՐԾՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 30 ՅՈՒԼԻՍ 1911

ԹԻԻ 29

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԽՆԴԻՐ

(ԱՌԱՋԻՆԿԱՅ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԱՌԹԻԻ)

Ամենայն Հայոց Կաթողիկոսական առաջիկայ ընտրութիւնը որ պիտի կատարուի 1911 Դեկտ. 11ին էջմիածնայ մէջ հաժադային պատգամաւորներու քուէով, այժմէութիւն կուտայ Կաթողիկոսական խնդրոյն, որ միշտ գոյութիւն ունի, սակայն ամէնէն աւելի խնդիր կը դառնայ երբ Լուսաւորչի Գահը թափուր կը մնայ Կաթողիկոսին մահուամբ:

Կաթողիկոսական խնդիրը իր մէջ կը պարունակէ ազգային այնքան կենսական չաներ, եւ ազգային գոյութեան հետ աղքատութիւն ունեցող այնպիսի խնդիրներ, որ ընտելանք կրնար արհամարհել եւ անպատու անօգուտ մտազբազումի մը առարկայ համարիլ Կաթողիկոսական ընտրութիւնը:

Կաթողիկոսական խնդիրը ըսելով պէտք է հասկնալ աւելի ազգային-հոգեւոր կազմակերպութեան խնդիր, եւ պէտք է խոստովանիլ թէ ազգին բազմաթիւ պետութեանց սահմաններուն մէջ բնակիլը արգելք եղած է միօրինակ ու որոշ գրութեան մը կազմակերպութեան:

Հետեւաբար Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը՝ իբր հոգեւոր իշխանութիւն, հանդէպ Ռուսահայոց, Թրքահայոց, արտասահմանի Հայոց եւայլն, ունի զատ զատ գիրք ու զատ զատ իշխանութիւն:

Ունի նաեւ իբր հոգեւոր գերագոյն հեղինակութիւն, իրեն պէս Կաթողիկոսական տիրոջ ունեցող Աթոռներու հանդէպ զիւրք մը, որ չէ ճշդուած օրինական եւ կանոնական որոշ պայմաններով: Միակ իշխանութեան մը, անկախ Եկեղեցւոյ մը վերին հոգեւոր իշխանութեան այսպէս իր հոգեւոր հօտին զանազան մասերուն վրայ ունեցած իրարմէ զատորոշուող իշխանութիւնները արդիւնք են արտաքին քաղաքական պայմաններու, եւ հետեւանք դարաւոր ժամանակաշրջանի մը մէջ ստեղծուած քաղաքական վիճակի մը:

Ասկէ զատ Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը ունի նաեւ քաղաքական-աշխարհիկ նշանակութիւն մը, մասնաւորապէս եւ գերազանցապէս Ռուսահայոց համար, զի էջմիածնայ Կաթողիկոսութիւնը քաղաքական-աշխարհիկ տեսակէտով ունի ճիշդ այն նշանակութիւնը Ռուսահայոց համար, ինչ նշանակութիւն որ ունի Թրքահայոց համար Կ. Պոլսոյ Պատրիարքութիւնը:

Հետեւաբար Հայոց Կաթողիկոսութեան

թիւնը՝ իբր բարոյական հիմնարկութիւն մը՝ զուրկ չէ ո՛ր եւ է նշանակութեան եւ արհամարհելի ու անգոսնելի ուժ մը չինքնակայացներ:

Ես անոնցմէ չեմ որ կաթողիկոսութիւնը՝ իբր կղեր-յետադիմական կազմակերպութիւն մը՝ կ'արհամարհեն եւ անոր գոյութեան ո եւ է նշանակութիւն չեն տար:

Ընդհակառակն ես կը հաւատամ թէ արդի պայմաններուն մէջ տակաւին էջմիածին իր նշանակութիւնը չէ կորուսած, եւ մեր քաղաքակրթական կեանքին մէջ որոշ չափով ունի կատարելիք դերը՝ ներկային անհրաժեշտութիւններէն մէկը կը կազմէ, եւ չէ, ինչպէս ոմանք կը կարծեն, անցեալի մը պատկերը:

Էջմիածնայ Աթոռը բարոյական միութեան մը խորհրդանիշը չէ միայն, այլ դրական արդիւնաւորման մը աղբիւրը, եթէ սակայն անոր վրայ բազմող կաթողիկոսը իրապէս ըմբռնած ըլլայ իր կոչումին բարձրութիւնն եւ նշանակութիւնը:

Շատ լուրջ ուշադրութեան առնելիք խնդիր մըն է նաեւ սա պարագան թէ՛ եթէ մինչեւ հիմա էջմիածնայ Աթոռը իր նշանակութեան արժանի բարձրութեան մը չէ հասած եւ հեղինակութեան մը տէր չէ դարձած, պատճառը այն չէ որ ազգի հակակղերական միտումներ ստացած է, այլ անոր համար է որ ազգին հոգեւոր կեդրոնը անկազմ վիճակ մը ունեցած է, եւ շատ քիչ կաթողիկոսներ ըմբռնած են իմենց պաշտօնին նշանակութիւնը:

Այսօր անկազմակերպութեան տեսակէտով էջմիածին ամէն ժամանակէ աւելի յոռեգոյն չըջանի մը մէջ է, զի 1836էն առջին Հայոց Կաթողիկոսներու յարաբերութիւնները գէթ Ռուսահայոց եւ Ռուս Պետութեան հետ, գէշ ազէկ օրինադրուած էին, եւ որոշ կանոնի մը — Պաշտօնէիքսին — համաձայն կը կատարուէին, իսկ Կաթողիկոսներու անձնական քմահաճոյիցը եւ ըմբռնումին կապուած էին կաթողիկոսական յարաբերութիւնները Թըրքահայոց, Պարսկահայոց, Արուստահանի Հայոց հետ, եւ բնաւ ո՛ր եւ է որոշ օրէնք գոյութիւն չունէր՝ սահմանող իր հոգեւոր հեղինակութիւնը:

Հիմա աւելի խառնակ է գրութիւնը, միեւնոյն տարտամ ու անորոշ վիճակը պահպանուած ըլլալով Ռուսիոյ սահմաններէն դուրս մնացած Հայոց Կաթողիկոսութեան հետ ունեցած յարաբերութեանց մէջ, եւ 1836ի Պաշտօնէիքսին՝ 1905ի Ռուս Սահմանադրութեան տրամադրութեանց պատշաճեցնելու կամ այդ առիթով քանի մը սրբադրութիւններ ընելու համար տարուած ջանքերը՝ վերջնականապէս նուիրագործուած չըլլալով եւ Պետութեան եւ Կաթողիկոսութեան միջ խնդրի առարկայ ըլլալով:

Հետեւաբար՝ նորոգութիւն կաթողիկոսը պիտի վերակազմէ Ռուս կառավարութեան եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան յարաբերութիւնները ճշտող օրէնքին ինչ ինչ մասերը, իր իսկ սեպհական ըմբռնումներով վարելով այդ յարաբերութիւնները, եւ հարկ է որ բոլորովին ի նորոյ ստեղծէ այն կանոնները որոնք կը կապեն էջմիածնայ Աթոռը Ռուսիոյ սահմաններէն դուրս գտնուող Հայոց հետ:

Այս փափուկ դրութեան մէջ նոր կաթողիկոսին ընտրութիւնը ամէն ժամանակէ աւելի կարեւոր ու ամենամեծ նշանակութիւն ունեցող խնդիր մըն է, եւ կ'արժէ որ լրջօրէն զբաղեցնէ զմեզ:

Եթէ նոր կաթողիկոսը յետապիմական ըմբռնումներու տէր մէկը ըլլայ, բոլոր այս խնդիրները պիտի լուծէ այնպիսի ձեւով մը, որ պիտի չեզոքացնէ բոլորովին էջմիածնի նշանակութիւնը, եւ անիկա փոխանակ կենսունակութեան մը աղբիւրը դարձնելու, պիտի դարձնէ անգործունէութեան եւ խաւարի աղբիւր մը: Լուսամիտ կաթողիկոս մը ընդհակառակն պիտի տայ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան՝ իրապէս իր կոչումին արժանի նշանակութիւն եւ հեղինակութիւն:

Հետեւաբար միւր բոլոր մտադրութիւնը պէտք է կեդրոնացնենք նախ ընտրելու համար կաթողիկոս մը, որ ժամանակին ու կացութեան բոլոր փափկութեան գիտակցութեան հետ, հաստատ միտք ունենայ լուծելու բոլոր այն յարաբերական կոնֆլիկտները որոնցմով չըջապատուած է:

Հայոց կաթողիկոսական Աթոռը, եւ լուծելու այնպէս որ այդ լուծումը, ազգին պահանջներուն, ժամանակին ոգոյն եւ ազգին ձգտումներուն համապատասխան կերպով մը կատարուի:

Կաթողիկոսական թաղութիւնը առաջին հանգոյցն է կաթողիկոսական խնդրոյն. առանց կաթողիկոսին անձնական համաձայնութեան, մեր ցոյց առած առկախ խնդիրները բնաւ չեն կրնար լուծուիլ:

Այդ խնդիրներուն մէջ առաջին կարգին նշանակութիւն ունի Ռուսահայոց ազգային ներքին ինքնավար մատակարարութեան հարցը, որ Հայ ազգին Ռուսիոյ մէջ գոյութեան հարցն է, եւ որ կաթողիկոսին առաջին ու անմիջական ուշադրութեան ներկայանալի հարցը պիտի ըլլայ:

Իսկ երկրորդական նշանակութիւն միայն ունի կաթողիկոսին իբր ընդհանուր եկեղեցւոյ պիտ Ռուսիոյ սահմաններէն դուրս մնացած Հայոց հետ ունեցած յարաբերութիւնները ճշգրտու հարցը, որ բոլորովին աննշանակ չէ, սակայն կրնայ անմիջական հանգամանք չունենալ, եւ չի կրնար հարկադրուիլ ու եւ ուժէ մը, մինչ ընդհակառակն միւսը հարկեցուցիչ է, եւ տարբեր ու անդիմադրելի ուժի մը կամքին ստորադասուած:

Հետեւաբար ապագայ Կաթողիկոսը Ռուսահայոց համար է, եւ պէտք է այնպիսի մէկը ընտրուի որ ամէնէն առաջ անոնց օգտակար ըլլայ եւ հո'ն անմիջական կերպով լուծելի խնդիրները լուծէ, ինչպէս որ պէտք էր լուծել: Այնպէս որ այս անգամուան ընտրութեան բուն նպատակը պէտք է ըլլայ աւելի կաթողիկոսութեան աշխարհիկ-քաղաքական դերը աչքի տուելու ունենալ, երկրորդական դիժի վրայ թողլով հոգեւորը:

Այս կարեւորութիւնը որոշապէս պարզելու համար, յաջորդ յօդուածով մը պիտի բացատրենք Ռուսահայոց այն խնդիրները որոնք կաթողիկոսի ընտրութենէն յետոյ իր անմիջական ուշադրութեան առարկայ պիտի ըլլայ:

ԱՐՇԱԿ Ա. ԱԼՊԹԱՃԵԱՆ

ՓԱՌՔԸ ԵՒ ՍԿԶԲՈՒՆՔԸ

ՀԱՅ ԿՆՈՋ ՀԱՄԱՐ

«Քեզմով այսօր սուրբ եկեղեցին կը պարծենայ, ո՛վ սուրբ Սանդուխտ վկայուի, որ քու հօրդ պաշտամունքը թողլով, Քրիստոսի համար սուրբ արիւնդ թափեցիր:

Թաղէոս առաքեալին աշակերտեցար, եւ Յշմարիտ հաւատքին մէջ ամրացար, չուզելով խառնակուիլ հեթանոսական պաշտամունքին՝ (երկնաւոր) Հօր երթալու արժանի եղար:

Իշխանուիլի փառքը քեցիր եւ աստուածային փառքով պնտեցար, այսօր երկնից զուարթունքներուն դասակից եղար. (ոստի) մեզի համար առ Տէր բարեխօս եղիր:»

Որոշակի չենք գիտեր թէ շարականի այս տողերը ե՛րբ գրուած են. բայց նկատելով որ Սրբուհի Սանդուխտի տօնը Վահան Մամիկոնեանի իշխանութեան միջոցին հաստատուած է, կը սիրենք զանոնք ընծայել Յովհան Մանդակունի Կաթողիկոսին:

Գրութեան գեղեցկութենէն կամ գրիչին մեծ անձ մը ըլլալէն աւելի, զմայլելի է անշուշտ Հայութիւնը այն շրջանին, երբ այդ տողերը կը ձօնուէին Հայ Եկեղեցիի առաջին վկայուհիին Այսօր անոնք ոչ միայն չեն ցնցեր հայ սիրտերը, հապանոյն իսկ շատեր կ'անգիտանան թէ ի՛նչ արժէք կրնայ ունենալ Սանդուխտ մը Հայ կեանքին համար: Քիչ են միթէ խորհողները թէ սուրբ մը աւելի, վկայուհի մը պակաս, եկեղեցին ասով բան մը չի կորսնցնիր. բայց այդպիսիները չեն մտածեր անշուշտ թէ՛ վկայախօսութեան ճոխութիւնը եթէ արժանիք մը չէ ո՛ր եւ է Եկեղեցիի համար, սակայն ժամանակ է որ վկաներն ու արքուհիները իրենց իսկական արժէքով գնահատուին, եւ հասարակութեան համար անոնց ունեցած օգտակարութիւնը չափանիշ մը ըլլայ իրենց տօնախմբութիւններու շքեղութեան:

Այս նկատումով ներկայ Հայ-Քրիստոնէութիւնը մեծ զրկանք մը ըրած է իր առաջին Ազգնադափայլ Աստղիկին, ար-

քածին օրիորդին, Սանգուխտ Կոյսին, որով կը կարծենք եւ կը պարծինք ունենալ Ստուգածային Փետային սիրոյն համար մեր հոգեւոր մօր՝ Ս. Եկեղեցիին զուստրերէն ողջակիզողներուն նախընծայ պատարագը» (Սոփեբ, հատոր Ը.):

Այս զոհարարութիւնը տեղի ունեցաւ 43 թուականին, Վասպուրականի Արտազ գաւառը՝ Շաւարշան քաղաքակեղի մօտ, Սանատրուկ գաշտին մէջ: Այդ կողմերը՝ մեր Եկեղեցւոյ առաջին Լուսաւորիչին՝ Թադէոսի քարոզութիւններուն, Հայաստանի հոգին վրայ ասպարէզ տուած էին: Հայոց արքունիքը այդ թուականին կը գտնուէր հոն, եւ բնական է խորհիլ թէ Աւետարանը միշտ կ'ուզուէր տարածել պալատական եւ իշխանական շրջանակներու մէջ: Հայոց աշխարհի Տիկիւնը՝ ինչպէս սովորաբար կը կոչուէին այն ատեն թաղաւորին քոյրը կամ աղջիկը, ճշմարիտ կրօնքին յարողներէն առաջինը կ'ըլլայ, եւ որովհետեւ՝ օրինակը վերէն գալուն համար՝ հետեւողները կը շատնային, թագաւորը կը ստիպուի իր հոգեհատորը բանտարկել: Այս արգելափակումն իսկ պատճառ կը դառնայ որպէս զի բանտապահներ եւ նախարարներ՝ մօտաւորապէս 2050 հետեւորդներով՝ հաւատան: Այս դէպքը կը զայրացնէ թագաւորը, եւ ընդհանուր ատեանի կը կոչէ Հայ Եկեղեցիին Քրիստոսի առաջին հարաւ՝ որ համարձակ կը խոստովանի իր հաւատքը եւ կը հեղու իր արիւնը, զինուորի մը հարուածը ընդունելով իր կուրծքին վրայ: Անոր կարմիրով վարդերանգուած հողը նորանշան աւազան մը կ'ըլլայ հայ հաւատացեալներուն համար, ուր երեք օր վերջ Ս. Թադէոսի կը դնէ իր նահատակութեան զրոշմը:

Իրարու յաջորդող սա՛ անգութ ոճիրներն ու աղիւսարշ նահատակութիւնները զգայուն տողեր ներշնչել են մեր անմահանուն վկայասէրներուն, բանաստեղծներուն եւ թատերագիրներուն: Բայց անոնցմէ ոչ մին թերեւ կրցեր է ա՛յնքան լաւ ցոլացնել Սանգուխտի նահատակութեան բուն արժէքը, ոչ մին անշուշտ չէ ունեցեր ա՛յնքան մեծ գնահատութիւն մը ծի-

րանածինին զոհարարութեան փայլուն ապացոյցին համար, որքան չարականին վերոգրեալ պատառիկը: Կ'ընդունիմ թէ սուրբերու վարքը եւ տօնակատարութիւնը բարերար ազդեցութիւն ունի հաւատացեալին համար, գիտեմ թէ Շաւարշաններու նկարչագեղ տեսարանները պատկերացնելով, Հայը կը պարտւորուի ազգային յիշատակներով, եւ համոզուած եմ թէ Քրիստոնէութեան նախօրեակներուն Հայութեան ապրած կեանքը ներկայացնելով բեմերու վրայ, դիւրին պիտի ըլլայ ժողովուրդի մը անցեալի փառքերը երգել: Բայց եթէ այս ամէնուն մէջ պիտի պակսի այն տարրը որ դիտակցութեան բերէ մեր իւրաքանչիւր դասակարգը ազգային գոյութեան պահպանումի պայմաններուն մասին, եթէ մեր մասնագործութեան հին զոհարանները չպիտի գնահատուին եւ սպառնան մեր մտաւոր եւ բարոյական շահատուներուն մէջ, եթէ հայ կիւնն ու աղջիկը չպիտի ստրկին թէ ո՛վ եւ ի՞նչ քրած է Սանգուխտ մը, Զարմանդուքս մը, Հոփիսի մը, եւ տակաւին շարքը փափկասուն Տիկիւններուն եւ հերոսուհի Շաքէներուն, Կիլիկիոյ Ազգանուէր եւ Դպրոցասէր ընկերութիւններ պիտի բաւականանան ապօքի տիկիւններ պատրաստելով, եւ չպիտի կրնան եղջիւղուհիներու միտքին ու սրտին ներշնչել բուն Տիկիւնքեան, հոգիի՝ ազնուութեան զգացումները, եթէ վերջապէս ապագային Հայուհիները փուճ տիտղոսներով չլինալու չափ տկարութիւն պիտի ունենան, վա՛յ մեզի:

Անցեալը կ'ոգեւորէ, բայց ներկան հուազ կը մխիթարէ: Եթէ նկատի առնենք հեգնական այն արտայայտութիւնը որով շատեր կը վերաբերուին Եկեղեցիին կատարելիք գերին հոնգւպ՝ ընելով թէ «կիւները եւ ծիրանիները թող հաւատան Աւետարանի հիմնած եւ հաստատած ճշմարտութիւններուն, մենք մեր զաղափարներն ու սկզբունքներն ունինք», պիտի տեսնենք որ Սանատրուկի եւ իր արքանեակներուն սերունդը աշխարհի երեսէն դու անճիտուած չէ: Սակայն ո՛ւր են մեր Սանգուխտները՝ որոնցմով պարծենայ Հայ Եկեղեցին:

Գ.Ա.ԶՐԻԿ (*)

(*) Այս գեղեցիկ յօդուածն ալ, ինչպէս անցեալ

ՀՈԳԵՒՈՐ ԿԵԱՆԵՐ

ՀՈԳԻՆ ՈՒ ՄԱՐՄԻՆԸ

Հակառակ նիւթապաշտ դարու մը նիւթապաշտ փիլիսոփայութեան, կայ ու կը մնայ հոգին, որչափ առնն որ կը մնայ մարդս կեանքը, ազրիւրը մեր հոգեկան բոլոր գործունէութիւններուն, զեռ կարելի չէ եղած նիւթէն բխեցնել, Բնագանդագէտներուն թողով ուսումնասիրութիւնը այն պատճառներուն, որոնցմով իրարմէ տարբերելու առաւելտով աւելի, կը լայնացայ անջրպետը նիւթին ու հոգին մէջ, խորհինք պահ մը մեր էութեան, մեր գոյութեան վրայ: Բայց նորէն կը տեսնենք թէ տիեզերքի վրայ չկայ ուրիշ արարած մը, որուն վրայ նիւթը եւ հոգին այնչափ ձեռք ձեռքի տուած ըլլան զարմանաքանչ արտայայտութիւններով երեւան գալու՝ որչափ մարդ էակին վրայ Գիտակից ենք թէ սերտօրէն կապուած ենք նիւթին հետ, անոր վրայ ու անով ենք շինուած, միեւնոյն ատեն զիտակից ալ ենք թէ կայ ուրիշ ներքին զօրութիւն մըն ալ մեր մէջ, որ նիւթին կը տիրէ: Հետեւաբար առանց ուրիշ գիտական փաստեր փնտռելու՝ այս զարաւոր դիտակցութիւնը մեր մէջ — որ ինքնին հոգին անժխտելի մէկ արտայայտութիւնն է — բաւական կ'ըլլայ մեզ համոզելու, թէ մարդ նիւթական, մարմնաւոր կեանքին հետ, որ զինքը դէպի անասունները կը մօտեցնէ, ունի նաեւ բարձր կեանք մը, հոգեւոր կեանք մը, որ զայն Աստուծոյ կը մօտեցնէ: Հետեւաբար իրաւունք չունէ՞ր Սաղմոսերգուն երբ դարեր առաջ՝ զարմացած մարդուն այս երկու բնութիւններուն վրայ՝ պահ մը անոր փառ-

քը, կարողութիւնները եւ մեծութիւնը կ'երգէր, հրեշտակներէն քիչ մը վար ստեղծուած ներկայացնելով զայն. երբեմն ալ «Մարդուն օրերը խոտի պէս են, ինչպէս դաշտի ծաղիկը այնպէս կը ծաղկի. վասն զի հոյն անոր վրայէն կ'անցնի ու ան կ'ոչնչանայ, եւ այլեւս անոր տեղը չի ճանչնար զանիկա», կը բանաստեղծէ տիւրօրէն Ամէն զարու. մէջ տյսպէս մտածած են ամէն անոնք՝ որ մարդուն վրայ խորհած են, եւ սքանչացած անոր այս կրկնապատկ երեւոյթին վրայ:

Հին փիլիսոփաներ, Սբ. Գրքը, բոլոր քրիստոնեայ իմաստասէրներ ընդունած են հոգին եւ մարմինն իրարմէ անբաժան գործակցութիւնը, եւ տարբեր առաւելտաներով խորհելով՝ տարբեր կողմերը ներկայացուցած են այս իրերախառնուած երկուութեան: Բրիտոնէութեան փիլիսոփայութեամբ զբաղող իմաստասէրներ, սրբազան մատենագիրներ եւ եկեղեցւոյ Հայրեր ո՛րչափ աւելի ուսումնասիրեցին մարդկային հոգին՝ այնչափ աւելի յանգեցան սա եզրակացութեան, թէ մարդկային հոգի-ամբողջը ունի իր մէջ կրկին միտումներ, դէպի բարին ու դէպի չարը, դէպի ազնուականն ու դէպի ստորինը, դէպի վստամ ու Աստուածային կարօտներ ու դէպի գետնաքարշ ու անասնական փափաքներ: Հետեւաբար մարմինն ու մարմնական ցանկութիւններու եւ բաղձանքներու վերազրելով ինչ որ կայ մարդուն մէջ իբրեւ չար ու ապականարար, մարմինը եւ հոգին ներկայացոյցին իբրեւ հակառակամարտ երկու թշնամիներ, որոնց պայքարումն տակ կը տառապի մարդ, որոնց բախսւմները իրարու դէմ տեւական կռիւի դաշտ մը կը դարձնեն մարդկային հոգին: Պօղոս առաքեալ իբրեւ հին ու նոր մարդերու պայքարը կը ներկայացնէ այս ներքին կռիւը: Այս խնդիրը քիչ մը լուսաբանելու համար նկատողութեան առնենք հետեւեալ կէտերը:

Ա. Չուրանանք մեր հոգին ազնիւ ու ստորին փափաքներուն, բարին աւ չարին գոյութիւնը: Շատեր այս դժուարալոյծ խնդրին մէջէն ելելու համար կ'ուրանան

Հարցու. «Այլակերպութեան տօնին ներքոյն հարկադրուեցանք օտար մը ետքը հրատարակել տօնակատարութեան օրէն, ժամանակին ստացած չըլլալու համար, Այս առիթը կը խնդրենք Պատ. աշխատակիցներէ, այժմեական գրութիւն մը ձեռք բերի՞ս հասցնել հրատարակութիւն օրէն զօնէ 8-10 օր առաջ, որպէս զի կարենանք հրատարակել ճիշդ իր ժամանակին: Դ. ԽՄԲ.

բարին ու չարը. մտացածին ու երեւակա-
յական բաներ կ'անուանեն զանոնք. Բայց
չմոռանա՞ք թէ ուրանալը դարմանել չէ:
Քանի որ չենք գիտեր չարին ծագումը,
կորելի՞ է զայն ուրանալ: Անոր գործած
աւերները չենք տեսներ մարդկային ըն-
կերութեան մէջ, մեր ազգին, մեր Եկե-
ղեցիին, մեր ընտանիքին եւ նոյն խոկ
մեր հոգիին մէջ: Երանի՛ թէ իսպառ զազ-
րէր ան գոյութիւն ունենալէ: Այն ատեն
պահ մը խաղաղութիւն պիտի տիրէր աշ-
խարհի վրայ. մարդիկ ու կառավարու-
թիւններ չարին դէմ պաշտպանութեան
համար խորհած ու գործադրած միջոց-
ներնին պիտի գործածէին աւելի զբազէս,
զօրացնելու համար բարին ձեռքը, ար-
դարութեան բազուկը: Պէտք չէ մոռնալ
թէ փառութեան թոյնը մարդկային ընկե-
րութեան խորքերուն մէջ կը գործէ, ու
անոր համար բարութեան, ճշմարտութեան,
գեղեցկութեան պէս բարձր խեղճներու
դեղթափը ներարկելու է հոն: Այս, ինչ-
պէս ըսինք քիչ մը վերջ, իրողութիւն
է նաեւ մարդկային հոգիին մէջ: Գիտենք
թէ ունինք բնագոյական մղումներ, չոր
փափաքներ, որոնք աւելի ստորին բնու-
թեան մը մնացորդներն են մեր մէջ:
Գիտենք նաեւ թէ աւելի բարձր ու ազ-
նիւ կարօտներ ալ ունինք, որոնց զօրա-
ցումը եւ մշակումը իրական անդորու-
թիւն ու բարգաւաճում կը բերէ մեր հո-
գիին: Մեր այս կրկին բնութիւններուն
պիտակցութիւնն է որ մեզ արթուն պիտի
պահէ հակելու համար մեր հոգի — աւան-
դին վրայ: Ուրացո՞ւ մի եւ անգիտացումի
անտարբերութեան մէջ զսնուելէ զգոյշ
ըլլանք:

Բ. Մեր մարմինին բնական ու օրինա-
ւոր պահանջները չչփոթինք մեր չար ցան-
կութիւններուն ու ապօրէն տենչանք-
ներուն հետ: Քանի որ անխզելի կապերով
միացած ենք նիւթին ու նիւթականին
հետ, մեր այս նիւթական մարմինը, պա-
տապարանը մեր հոգիին, ունի իր բնական
եւ զրինաւոր պահանջները, որոնցմէ
զայն զրկել անիրաւ պիտի ըլլար: Ինչպէս
զաշտի շուշանը, որ մարդկային աչքերու


եւ զեղեցկաւորութեան ճաշակին դոհա-
ցում տալու համար իրաւունք ունի տպ-
րելու, եւ ատնելու իր բաժինը հողէն,
ջուրէն, օդէն ու արեւին լոյսէն, նոյնպէս
ալ մարդս աւելի՛ բարձր կոչումի մը ծա-
ռայելով ու հոգեկան աւելի մեծ կարե-
լիութիւններով օժտուած ըլլալով՝ իրա-
ւունք ունի ապրելու եւ գոհացնելու իր
մարմինին օրինաւոր պահանջները: Ծոյնա-
ւորական դարերու սխալ ըմբռնում մըն է
զրկել ու չարչրկել մարմինը, տառապեց-
նել զայն, հոգ չտանիլ մաքրութեան, ա-
ռողջութեան ու հանգիստի պայմաննե-
րուն: Մեր ստորին բնութեան, չարին
մեր մէջ ի յայտ եկած արտայայտութիւն-
ներուն դէմ կռուելու համար՝ մեր մար-
մինին, ֆիզիքականին դէմ կռուիլ մեծ
սխալ մըն է՝ որ գործադրուած է հին
ժամանակներու մէջ: Պէտք է միշտ աչքի
առջեւ ունենալ Քրիստոնէութեան շեշ-
տած սա ճշմարտութիւնը թէ՛ մարդկային
մարմինը Հոգիին տաճարն է, տաճարը
Աստուծոյ Հոգիին, որ կը աիւրէ մեր հո-
գիներուն ու կը լեցնէ զանոնք բարձր
խեղճներով:

Գ. Զօրացնենք մեր հոգեւոր կեանքը:
Ինչպէս մեր մարմնաւոր, ֆիզիքական
կեանքը, նոյնպէս մեր հոգեւոր կեանքը
պէտք ունի խնամքի, անունդի, զարմանի:
Մեր մէջ զօրացած ու արմատացած ամէն
բարի ունակութիւն ու սովորոյթ մահա-
ցումն է մեր մէկ չար ցանկութեան. զէպի
վեր ամէն քայլափոխ հեռացում մըն է
ապականութեան ճահեճէն: Մեղքերու Սո-
ղոմէն մեր երեսները դարձնելով, ուրիշ
բան մը ըրած չենք ըլլար՝ եթէ ոչ Քա-
նանու օրհնութիւնները դիմադրաւած: Եւ
ինչ բանի համար են մարդկութեան, ազ-
գերու մէջ հաստատուած այսչափ եկեղե-
ցիներ, զպրօցներ, բարեսիրական հաստա-
տութիւններ, եթէ ոչ զօրացնելու համար
բարին ու ճշմարիտը. բարգաւաճեցնելու
համար հոգեւոր կեանքը ազգերու եւ ան-
հատներու մէջ: Այն ամէնուն համար, որ
կ'ուզեն ինկածութեան ձորերէն զէպի
ճշմարիտ մեծութեան լոռնագագաթները
վերանալ, կայ առաջնորդ մը, որ պիտի

բունէ անոր ձեռքէն: Ասոր համար իրաւամբ ըսուած է թէ մարդ հարտարապետն է իր ճակատագիրի շէնքին: Արեւը իր ամենօրեայ ծագումին ու մարը մանելուն հետ, կա՛մ երկնաւոր հարսանեաց ոսկեթել պատմութեան ասուին կը հիւսէ մեղի համար, կամ օղակներ կ'աւելցնէ մեր ստրկութեան ամբապինդ շղթաներուն վրայ:

Ուրեմն, ո՛վ Հայ Եկեղեցիի ղաւակ, Քրիստոնեայ բարեկամ, աշխատհային գործերու, ապրուստի հոգերու հեւ ի հեւ վազքիդ մէջ պահ մը կը կենա՞ս ու կը խորհի՞ս հոգիիդ, հոգեւոր կեանքիդ ալ վրայ: Եթէ ոչ դուն ալ անոնցմէ ես, որ ոչ հոգիի կը հաւատան, ոչ ալ բարիին, եւ աւելի աննպատակ կը գտնեն ինքզինքնին քան «Իսաչառ խտուր որ այսօր կայ եւ վաղիւ փուռը կը նետուի»: Չէ՛, այդ չէ իրողութիւնը մարդուն համար: Աստուածային պատկերը հոգիիդ մէջ՝ ուրիշ բան մը չէ՝ եթէ ոչ բարութեան ու սրբութեան անհունութեան մէկ ցոլացումը հոգիիդ մէջ: Մի ուրանար բարիին յարելու, չարին գէ՛մ մաքառելու կոչումդ: Մի՛ մոռնար պարտականութիւններդ՝ ֆիզիքական կեանքիդ համար, բայց ամէնէն աւելի զօրացո՛ւր հոգեւոր կեանքդ: Ի՞նչ կը շահիս անյոյս ու անսիրտ ապրելէ: Աննպատակ ու յիմարտկան թարթուքով մը ազատութիւն չէ: Բու ճշմարիտ Քրիստոնեայ նախնիքներուդ քայլերուն հետեւէ, ու մի՛ խորհիր թէ այդ կերպով զաղրած պիտի ըլլաս լուսաւորեալ ու դիտական դարու մը ղաւակ ըլլալէ: Ըշմարիտ լոյսը երկինքէն կ'իջնայ մեր հոգիներուն վրայ: Վեր նայէ՛ ոչ թէ վար, յառաջ նայէ՛ ոչ թէ ետ, հոգեւորը հոգա, ոչ թէ մարմնաւորն ու անցաւորը:

ԳՐԻԳՈՐԻՍ



ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ, եւ իւր Պատմութիւնը, Վարդապետութիւնը, Վարդութիւնը, Բարեկարգութիւնը. Արարողութիւնը, Գրականութիւնը, ու Ներկայ կացութիւնը:— Նախապէս Դաղիբէն հրատարակեց եւ այժմ հայերէնի վերածեց ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՕՐՄԱՆԵԱՆ, Նախկին Պատրիարք: Տպգր. Վ. եւ Հ. Տէր-Ներսէսեան, Կ. Պոլիս, 1911, երես մեծ 80 271.— Գին 15 դր:

1910-1911 զրական արդիւնաւորութեան շրջան մը եղաւ Օրմանեան Սրբազանի համար Eglise Arménienne, Հաւնապատում, եւ Eglise Arménienneի հայացածը, այնքան յուրջ աշխատութիւններ են, որ ժամանակ եւ հմտութիւն կը պահանջեն: Հաւնապատումը քանի մը տարիներէ ի վեր ձեռք առնուած գործ մըն էր, որ լրացաւ իսկ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ իր ֆռանսերէնով եւ հայերէնով թէեւ բոլորովին նոր ձեռնարկ մըն է, բայց իր պատմութիւնը ունի Հայ Եկեղեցիով հետաքրքրուող Ամերիկացի եւ Եւրոպացի բարեկամներ մեծ փափաք կը տածէին ու նենալու համար այնպիսի գիրք մը որ Հայ Եկեղեցին ճանչցնէր իրենց սեղմ բայց ճիշդ շրջանակի մը մէջ: Հայասէր ողբացեալ Մր. Ալէն մասնաւորապէս չա՛տ կը շեշտէր այս պէտքը: 1907 Մայիս 2, Դշ. օր, Բրօֆ. Սքր. Տէր Յակոբեան այցելելով ինձ, Մր. Ալէնի եւ Չէյմպլըսի կողմէն անգամ մըն ալ շեշտեց այս փափաքը եւ ուղեց որ ծրագիր մը պատրաստեմ: Ծրագիրը պատրաստեցի եւ յանձնեցի յարգելի Բրօֆ.ին (Մայիս 19): Մայիս 23, Դշ. Մր. Ալէն, Մր. Նափի. Պատ. Թաչճեան՝ Օրմանեան Սրբազանին կ'երթան եւ Ն. Սրբազնութեան կարծիքը կը հարցնեն իմ պատրաստած ծրագրի մասին եւ խորհրդակցութիւններ կը կատարեն: Սրբազանը կը հաւանի ծրագրին, եւ կը թելադրէ որ միայն իմ ձեռքով խմբագրուի պահանջուած գործը այդ ծրագրին համեմատ, մինչ ես առաջարկած էի Բրօֆ.ին՝ քանի մը մասնապէսներու մէջ բաժնել աշխատութիւնը: Հետեւաբար նոյն օրը Մր. Ալէն, Պատ. Թաչճեան եւ ետքը Մր. Նափի (Խարրեբդ Գոլէճէն) ինձ ալ այ-

ցեղեցիքն եւ փափաք յայտնեցին որ ձեռնարկենք գործիւնս պատրաստակամութիւն յայտնելով հանդերձ՝ ցոյց տուի այն բոլոր նիւթական եւ բարոյական դժուարութիւնները, որոնք ակնյայտի էին Համիտեան կառավարութեան ատեն ա՛յս պիտի հրատարակութիւններու համար Մր. Ալէն խօսք տուաւ նիւթականը հոգալու մասին խորհիլ, նոյն տարուան վերջերը ես Դպրեւանք փոխադրուեցայ Պոլսէն, եւ ծրագիրը մնաց ծրագիր:

Օրմանեան Սրբազան եթէ այն ատեն ազատ ըլլար պաշտօնական զբաղումներէ, ինքը պիտի գրէր ուղուած գործը, եւ հարկաւ այդ միջոցին վերապահութիւններով պիտի գործածէր իր գրիչը՝ տիրող քաղաքականութեան եւ գրաքննութեան հանդէպ: Եւ սակայն Սահմանադրութեան հռչակումէն ետքը շուտով նուիրուեցաւ Հայոց Եկեղեցիին եւրոպացիներուն եւ Ամերիկացիներուն ձանձնելու գործին՝ նոր ծրագրով եւ ուղղութեամբ ու ազատ գրչով:

Մեր ծրագրով՝ ես Հայերէն պիտի գրէի Վե. Մր. Ալէն Անգլիերէնի պիտի վերածէր զայն: Իսկ Օրմանեան Սրբազան ուղղակի Փռանսերէնով խմբագրեց իր գործը, որ մեծ հետաքրքրութիւն չարժեց քրիստոնեայ օտար չըջանականերու մէջ. այսինքն՝ գործը հաւաք իր նպասակին եւ ուրիշ լեզուներու ալ թարգմանելու ձեռնարկներ եղան՝ հեղինակին հաւանութեամբ:

Այս գործը օտարներու համար գրուած ըլլալով՝ Հայերէնի վերածելու միտք չկար, վասն զի Հայոց համար չառ ծանօթ էր նիւթը: Եւ սակայն գործին օտարներու առջեւ դրած ընդունելութիւնը՝ գրգիռ եղաւ որ Հայերէնի վերածուի Eglise Arménienne, թէ՛ Կովկասի եւ թէ՛ Թուրքիոյ մէջ յայտնուած փափաքներու համաձայն: Օտարներու առջեւ այնքան չհշտուեցաւ այս բնորոշութիւնը, որ կարծես թէ Հայ Եկեղեցին նոր կը ծանչնային իր լրութեան մէջ: Վատիկան իր անսակէտով՝ արդիւիւ ալ գիւրքերու ցանկին մէջ անդուց Eglise Arménienne, սքովհետեւ Հայ Եկեղեցւոյն անկախութիւնը վերին աստիճանի պատմադիտական նորութեամբ փաստուած է այս գիրքին մէջ, եւ քրիստոնէական Եկեղեցիներէ իւրա-

քանչիւրին ծագումն ու ձգտումները լա՛ւ որոշուած են: Անշուշտ, այսպիսի գիրք մը հաճելի պիտի չըլլար Վատիկանին, որ պարտք զգաց իր հըռ ոչխարները զգուշացնել մոլորումներէ ? (*)

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ, ինչպէս ըսինք, հասաւ իր նպատակին, եւ այս մասին արտայայտուած գաղափարներն ու եղած գնահատումները արդէն համեստ, բայց յաջող կերպով խտացուած են Հայերէնի Նախաքանկին մէջ:

Հայ ընթերցողը թէեւ ծանօթ իր Եկեղեցւոյն, բայց այս գիրքով, որ գրեթէ նորէն խմբագրուած է առանց ալլալոսութեան, աւելի եւս պիտի թափանցէ մեր Սուրբ Եկեղեցւոյն, եւ պիտի սիրէ զայն աւելի եռանդով:

Դործը այնքան պարզ լեզուով գրուած եւ նիւթերը այնքան որոշ կերպով քննարկուած եւ դասաւորուած են, որ աճելորդ կը համարիմ այս մասնախօսականը վերածել մասնագիտութեան:

Միայն դիտել կուտամ թէ Օրմանեան Սրբազան կը սիրէ համապատասխան գրել այսպիսի նիւթերու վրայ: Աղբիւրներու վերլուծում եւ քննադատութիւն, եայլն, այս բոլորը իր տեսութեամբ՝ մաղուած եւ զտուած վիճակի մէջ կը սահին իր գրչէն: Ա.Թ.Ո.Բ. ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑԻՆ ալ այս ոճով գրած է: ՀԱՄԱՊԱՏՈՒՄԻ ընթերցողները վարժուած պիտի ըլլան Սրբազան հեղինակի մասնագիտութեան այս ոճին, որ չյոգնեցներ ընթերցողը:

Ինչ ալ ըլլայ իմ տեսութիւնս, ինչ ինչ կէտերու նկատմամբ, ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ իր պատմադիտական արժէքով՝ եւ իր պարզութեամբ ընտիր գործ մըն է, օգտակար ո՛չ միայն օտարին, այլ մանաւանդ Հայուն, մասնաւոր աշխարհի տունն մը, ուր սոսկալի յաւակնութիւններով

(*) Այս առթիւ հայ լրագիրներէն ոմանք զարմանալի բանդիտութեամբ հրատարակեցին, թէ Յրմանեան Սրբազանի գիրքը իրր Հայու գործ առաջին անգամ անցած է Էճէֆէսի մէջ: Մինչդեռ իրողութիւնը սա է, որ Վատիկան կ'արգիլէ կարգալ իր հօտին՝ այն բոլոր գիրքերը, ո'ր լեզուէ եւ գրչէ ալ ըլլան, որոնց մէջ իրեն գէմ բաներ մը կը տեսնէ:

կարծիքներ, միաբեր կը յայտնուին հայ Եկեղեցւոյ մասին, մասնաւորապէս Կովկասեան թերթերու մէջ, բացատրելու եւ մեկնելու համար անոր ՈԳԻՆ:

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ առաջին երեսներէն իսկ կը զգաս, որ Հեղինակը ո՛րչափ լաւ գիտէ իւր նիւթը: Լաւ կ'ըսուած բաներ ու բացատրութիւններ, արամաբանօրէն կապուած նախադասութիւններ, այս գիրքի ամէն երեսին վրայ, կ'աւելցնեն գրուածքին արժէքը:

Հայ Եկեղեցւոյ բարեկարգութեան վերաբերեալ էջերու մէջ Օրմանեան Սրբապետի թելադրութիւնները շատերուն համար զարմացուցիչ պիտի ըլլան: Այս տեսակէտէն մասնաւորապէս ընթերցողներու ուշադրութիւնը կը հրաւիրեմ **ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ** 170-171 երեսներու եւ շարունակութեան վրայ: Այս կէտը մենք ալ շեշտած էինք Վարդապետական Միութեան կանոնադրութեան մէջ, որ զգրախոսարար տեսակներու թիւն չունեցաւ:

Հայ Եկեղեցւոյն յարաբերութիւնները ուրիշ Եկեղեցիներու հետ, միութեան խնդիրները՝ լաւին եւ յոյն քաղաքականութեանց ազդեցութեան տակ, մեծ ձեռնհասութեամբ գրուած են, եւ կան զուխներ որ գիրքեր կ'արժեն:

Անոնք որ շատ լաւ ճանչցած են եւ մասնաւորապէս զգացած են Հայ Ազգին Պատմութիւնը, այս դարերէ ի վեր հարստահարուած, այլեւայլ ազգերու բռնութեան լուծերուն եւ փոքր բարբարոս ցեղերու զուգումներուն տակ բզբառուած ազգին պատմութիւնը, այս գիրքին մէջ ալ պիտի տեսնեն որ Հայ Եկեղեցիին ինչ դեր կատարած է իր վերաւոր եւ արեւմտ գոյութեամբ՝ ազգային կեանքի պահպանութեան գործին մէջ: Օրմանեան Սրբապետի նոր գիրքը կարողացողներ զժողովութիւն պիտի չկրնն այս ճշմարտութիւնը համոզուածով չօչափելու համար:

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ կարելի է համարել նաեւ Օրմանեան Սրբապետի վերջնական, վճռական եւ փորձառական տեսութիւններու մէկ համայնապատկերը մեր սուրբ Եկեղեցւոյ մասին, մասնաւորապէս անոր բարեկարգութեան վերաբերեալ կէտերու մէջ:

Ես պիտի փափաքէի որ Հայ Եկեղեցին մօտէն ճանչնալ ուղղուի, ու շարունակեամբ կարգային այս գիրքը, որ պիտի սրէր ընթերցողին հետաքրքրութիւնը, պատճառելով անոր գեղեցիկ հաճութիւնը մի մտքի եւ սրտի:

ԲԱՅԳԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Անկիւրիս, (Կարմիր-վանք)

ԱՍՈՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ս. Ե Փ Ր Ե Մ

Գ. (1)

Եթէ պարզ տեսակցութեան մը համար էր որ Եփրեմ Մինչեւ Կապադովկիան Կեսարիա երթալով այցելեց Ս. Բարսեղի, չիտակը չէր արժեր երկար ճամբորդութիւն մ'ընելով այդքան դժուարութիւններ յանձն առնել, որով Տիւղալ անվաւեր կը նկատէ Եփրեմի թէ՛ Եգիպտոս կաթարած ճամբորդութեան եւ թէ Ս. Բարսեղի տուած այցելութեան պարապան, 367 թուականէն աւելի առաջ նշանակելով անոր վերահաս մահը: Ասորի մոտենալ գիրքեր կը կարծեն թէ Եփրեմի Կեսարիա երթալը ունէր իր որոշ ու ծրագրուած նպատակը, որ էր Եպիսկոպոսութեան աստիճանին բարձրանալ, քանի որ զեռ սարկաւազ էր(2), եւ իր հայրենիքին մէջ կարելի չէր այս աստիճանին բարձրանալ, որովհետեւ Եգիպտոս մէջ Ուղղափառները ալեւս կորսնցուցած էին իրենց գորաւոր գիրքը՝ Բարդաճանեաններու ներկայութեանը, որոնք Արիւսեաններու չափ վրտանալու որ լայնով Քրիստոնէական Եկեղեցւոյ զէմ զօրաւոր պաշտպանութիւն մը կը վայելէին Վաղէս Կայսրէն, եւ օրումն հպիսկոպոսներն ալ կայսեր կողմէ իրենց շնորհուած պատիւներէն ու գրամական նպաստներէն յղիացած, վերապահ ընթացք մը բռնել սկսած էին Ուղղափառներուն դէմ:

Եթէ Պրանտաջի քննադատ մատենագիրը մէկ կողմէն կ'ուզէ խնդրական ներկայացնել Եփրեմի Կեսարիա երթալու պարապան, միւս կողմէ չի քաշուիր սա տողերը գրելու. «Չորս տարիներ սահած էին Եփրեմի վերադարձէն ի վեր (անշուշտ Կեսարիայէն), երբ Ս. Բարսեղ իրեն զմէջ

(1) Բ. յօդուածը տես Ծիւ 26:

(2) Հ. Դ. Զարբանէլեան լոկ տարկածաց կը ճանչնայ Եփրեմը իր մօտենագրական ուսումնասիրութեան մէջ. «Ս Եփրեմ սարկաւազ Եգիպտոս եւ վարդապետ Եկեղեցւոյ»: Հմտ. Մատենադր. Հայկ. Թարգմ. էջ 413:

երկու շեկահներ Ոսրոէնեաց մայրաքաղաքը (Եդեսիա) եպիսկոպոս ձեռնադրելու համար. կը կարծուի թէ Եփրեմ միւրժած ըլլայ: Կարելի՞ էր միթէ այս դարուն մէջ պարզ սարկաւազ մը Եպիսկոպոս ձեռնադրէր(1). պատասխանը ինքնին յետադարձ է արդէն, որով անգամ մ'ալ կը հաստատուի այն կարծիքը թէ Եփրեմ եպիսկոպոսական աստիճանը ընդունեց Ս. Բարսեղէն(2), եւ թերեւս ստին մըն ալ միաց Կեսարիա, ու մատենագրական աշխատութեամբ պարագեցաւ Բարսեղի հիմնած միաբանութեան մէջ, մօտէն ուսումնասիրելով հոն տիրող վանական կեանքի կարգն ու սարքը ու կրօնական կեանքի ըմբռնումները:

Իր բացակայութեան միջոցին հերետիկոսները նորէն զուխ բարձրացուցած էին Եդեսիոյ մէջ, եւ Ուղղափառներուն դիրքը վտանգի տակ էր գրեթէ: Ս. Բարսեղի խորհրդով Եփրեմ վերադարձաւ Միջագետք, անցնելով Մալաթիայէն ու Սամուսաւէն (3) ու մտաւ Եդեսիա, ուր Ասորիք փառաւոր ընդունելութիւն մ'ըրին իրենց Եպիսկոպոս հարազատին: Այս անգամ քանի որ տարբեր դիրքով մը կը ներկայանար իր ուղղափառ հայրենակիցներուն

րուն եւ միանգամայն իր հակառակորդներուն, բնական է որ տարբեր ուղղութեամբ մը պիտի դորձէր այս վերջիններուն դէմ, աւելի՛ ազդեցիկ ընելու համար ուղղափառութեան դիրքն ու արժէքը, իր քարոզներովն ու ճառերովը շանթահարած է մանաւանդ բարդածանեան աղանդաւորները:

Եփրեմի կենաց վերջին տարիներուն (370-373) Վաղէսի յաջորդ Մեծն Թէոդոս կայսեր ազդու ջանքերով քրիստոնէութեան դէմ ուղղուած հալածանքները դադրեցան, եւ եկեղեցիներն ու վանքերը վերաշինուեցան. բայց հազիւ թէ Պարսիկները քաշուած էին Միջագետքի սահմաններէն՝ հաշտութիւն կնքելով Յուդայի հետ, եւ ահա Հոները գլուխ բարձրացուցին Արեւելքէն, եւ արշաւեցին Բիւզանդական կայսրութեան սահմանները, արշակելով Հայաստանը, Ասորիստանը, Միջագետքը, եւ հասան մինչեւ Եդեսիա եւ, ըստ Լամիրի, կաղնապոսի կրօնաւորներու եւ կոյսերու վանքերը, որոնք Եդեսիոյ Ս. Լեւոն վրայ կը գտնուէին (1):

Եփրեմ այս անակնկալ հարուածէն բնականաբար տառապեցաւ Եդեսիացիներուն հետ, եւ իր ներոյժ գրչով նկարագրեց այդ բարբարոսներուն հասուցած չարիքները, որոնք աղանդաւորներու չափ վնասակար եղան քրիստոնէայ Եկեղեցւոյն համար. այդ նկարագրութիւնը, որ կրնայ համարուիլ առաջին «Ողբ Եդեսիոյն», գեղեցիկ քերթուածի մը մէջ գեռ կը պահէ իր Ասորերէն բնագիրը, զոր գաղղիներէն թարմանած է Տիւլալ Եփրեմ Կեսարիայէն վերադարձէն յետոյ հազիւ 5-6 տարի ապրեցաւ, եւ որքան որ քաղաքական ու կրօնական անվերջ երկպառակութիւնները ծանր դժուարութիւններ կը յարուցանէին իրեն շուրջ, եւ կը նեղէին իր վերջալոյսի օրերուն հասած յոգնաբեկ ու արդիւնաշատ կեանքը՝ քայքայելով իր

(1) Նիկիոյ ժողովին կանոններուն համեմատ երեք եպիսկոպոսներ հազիւ կրնային մէկ եպիսկոպոս ձեռնադրել:

(2) Եփրեմի Ս. Բարսեղէն եպիսկոպոս ձեռնադրուելու պարագան անգամ մը եւ կը հաստատէ այն կարծիքը թէ Կեսարիոյ աթոռը աւելի առաքելական է նախաձեռնար կը համարուէր քան Եդեսիոյ աթոռը ոչ ուն առաքելական ծագում մը տալու փորձին մէջ ի զուր կը ճղնէին Ասորիք եւ մինչեւ Գ. դարուն վերջը թէ՛ Միջագետք եւ թէ Հայաստան Կեսարիոյ եպիսկոպոսական աթոռին ձեռքը կը կազմէին:

(3) Հռոմկլայէն շատ վեր, Եփրատի Արեւել. հիւսիսային կողմը. Շամշատ եւ Սամուսատ ձեռքով աւերուած է մեր մէջ: Լիկիանոսի ծննդավայրը, ռաղմաղիտական ու վաճառականական անցք մ'էր՝ ծաղկած Ս. Դարուն ուր հայերէն գրեթէ գիւտին առաջին ծարղմանիչներն ալ այցելեցին (տես Ծովք, Տիւրք էջ 103-104): Մեր պատմիչներէն Ա. Լասաբի վերացի այս քաղաքին հիմնադրութիւնը միամտօրէն Սամոնի կը վերադրէ որ երկրաշարժէ հիմնայատակ եղած է 1115ին: Հմմտ. Մ. Ուռհայեցի էջ 416:

(1) Հոներու այս արշաւանքէն վերջ Թէոդոս կայսր Պարսից Շապուհ Թագաւորին հետ համաձայնութեամբ Հայաստանը երկու մասի բաժնեցին (388), բայց Միջագետքը դարձեալ մնաց իբրեւ կռուախնձար երկու տէրութեանց միջեւ:

անդէն վտանգուած անողջութիւնը, սա-
փայն գտնուեցան բարեպաշտ վանական-
ներ ու հաւատարիմ բարեկամներ, որոնք
ամէն կերպով մխիթարեցին զինքը մին-
չեւ գերեզման

Միջագետքի մէջ Եփրեմի մասաւորական
գործունէութիւնը — նախ զասարօսու-
թեամբ ապա դրականութեամբ — սքան-
չելի եղաւ, ինչպէս կը վկայեն իր բազ-
մաթիւ գործերը, որոնք կ'ամբողջացնեն
իր կեանքի վերջին շրջանը Ունեցաւ
Մար—Սապա անուն սիրելի բարեկամ մը,
որուն ի պատիւ բազմաթիւ երգեր շարադ-
րեց, բանաստեղծութիւններ գրեց իր
ժամանակի բարեպաշտ անձերուն ու ե-
պիսկոպոսներուն վրայ, մասնաւորապէս
ողբաց Եղեսիոյ անկումը՝ Հոնորուն
ձեռքով, եւ Նիզիպի գրաւումը՝ Շապուհ
Բ.ի կողմէ. զրուսաց իր սնուցիչ ու
դաստիարակ Յակոբ եպիսկոպոս Մծբնեց-
ւոյ կեանքը, Կոստանդիանոս կայսեր
հրաշալի դարձը (311) եւն.:

Եփրեմ իր բարեպաշտական գեղեցիկ
ձիրքերուն կը միացնէր նաեւ մարդասի-
րութիւնը, գոթն ու կարեկցութիւնը,
որոնց օրինակները տուաւ՝ երբ սոսկալի
սով մը չըջապատեց Եդեսիան եւ խոր
սուգի մէջ թաղեց անոր բնակիչները:
Եփրեմ, հակառակ իր նիւթական աննպաստ
կացութեան, չատ մը չբաւորներ ու կա-
րօսներ սփռեց ու դարմանեց, առպտօ-
րէն նուիրեց իր նիւթական ու բարոյա-
կան օժանդակութիւնը, ու մեռաւ 373 Յու-
նիս Ծին, չըջապատուած բոլոր Եդեսիացի-
ներուն յորդանքէն ու համակրանքէն: Իր
փառայել յուզարկաւորութիւնը բոլոր մօ-
տակայ վայրերէն կարեւոր բազմութիւն
մը քաշած էր իր ետին(1): Շատեր սու-
գով, ու արցունքով հետեւեցան իր գա-
գաղին, ու մարմինը ամփոփուեցաւ Եդե-

սիոյ Արեւմտեան կողմը Ս. Լերան վրայ
գտնուած վանքի մը մէջ(1):

Գրական ու գործունէութեան մեծ
ազդեցութիւնը, զոր Եփրեմ ի գործ դրաւ
Արեւելքի եւ մասնաւորապէս Միջագետքի
մէջ, իրեն տուաւ Ասորւոց մարգարէ
ախաղասը: Այս ազդեցութիւնը չսահմա-
նափակուեցաւ Սուրիոյ եւ Միջագետքի
մէջ, այլ բոլոր քրիստոնէայ աշխարհին
վրայ տարածուեցաւ: Իրմէ ունինք Ասո-
րերէնէ զատ Յունարէն, Հայերէն, Ղպտե-
րէն, Արարերէն. Եթովպերէն լեզուով
կրօնական ու բանաստեղծական գրուած-
ներ Եփրեմ աշխատեցաւ մանաւանդ բա-
նաստեղծութեան արուեստը զարգացնել
Ասորական գրականութեան մէջ, զոր Բար-
դանունն ու անոր որդին Հերմոնիոսէն
յետոյ ոչ ոք մշակած էր: Եփրեմ այս
բանաստեղծութիւնով իր աշակերտներուն
կը սորվեցնէր այն վարդապետութիւնները
զորս ինքը կը դաւանէր եւ կը քարոզէր: Իր
կենսագիրներէն՝ ոմանք կը պատմեն թէ
բոլորովին կոյսերէ բաղկացեալ խմբերգ
մը (choeur) կազմած էր, որոնք առսու-
րիկուն եկեղեցի կ'երթային, եւ իր տես-
չութեան տակ կ'երգէին այն կրօնական
երգերը զորս ինքը շարադրած էր: Հաւա-
սարապէս այս երգերով է (որով ինքզինքը
երջանիկ ախոյեանը ցոյց կուտար Բարդա-
նունի) որ ներքին Ասիոյ մէջ տարածուած
բազմաթիւ հերետիկոս աղանդաւորներու
դմ պայքար կը մղ'ր, եւ որոնց շարքին
մէջ Եկեղեցւոյ այս նշանաւոր Հայրը ան-
ձամբ կը յիշէ Արիոսեանները, Եւնոմեան-
ները, Քաթարիսթները, Օֆիթները, Մար-
կիոնեանները, Վաղենաթիսեանները, Մանի-
քեցիները, Բուքուանները, Պոդիկեաննե-
րը, Շարաթեանները եւ Բորբորիանները(2):
Իր դիմաւոր յարձակումները ուղղուած են
մասնաւորապէս Մարկիոնի, Մանիքէսի,

(1) Ըստ Վատիկանի ձեռագրին, Սիւնակեցի-
ներն (les stylites) ու ներկայ եղած պիտի ըլլան
Ս. Եփրեմի յուզարկաւորութեան. բայց ըստ Ասե-
մանի, այս կարգը հաստատուեցաւ 459ին Սիմէոն
Սիւնակեցւոյ՝ կողմէ որ մինչեւ կեանքին վերջը
սիւնի մը վրայ ապրեցաւ (հիմա, Տըլքայի Սիւ-
նակեցիները էջ 1-4):

(1) Տ. Տրդատ Եպիսկ, Պալեան իր «հայ վա-
նօրայք» անուն ուսումնասիրութեան մէջ Եփրեմի
գերեզմանը սխալմամբ Եդեսիոյ հիւսիսային կողմի
«Կիւլէքէլը» անուն բլուրին վրայ նշանակած է:

(2) Ս. Մեսրոպ Աղուանից երկիրը ճամբորդելու
ատեն Հայաստանի մէջ հանդիպած է Բորբորիո
ըսուած աղանդաւորներուն:

Բարդաճանի եւ Արիօսի դէմ, ինչպէս կը հաւաստեն իր կենսագիրները. որովհետեւ այն թուականին յորում Եփրեմ սկսաւ փայլիլ, այս աղանդագետներուն քարոզած մորար վարդապետութիւնն ալ սկսաւ առնուիլ զորում ծաւալ գործել:

Ինչպէս ըսինք, Եփրեմի մտրմինը ամփոփուած է Եղեսիոյ Ս. Լերան վանքերէն մէջուն մէջ: Բարեբախտաբար՝ անցեալ դարերուն անհետացող բազմաթիւ վանքերուն մէջ, այդ վանքը դեռ յանգուն կը մնայ այսօր Ս. Սարգսի (1) վանք անունով, ուր կը գտնուի նաեւ Եփրեմի դամբարանը՝ եկեղեցւոյն հիւսիս-արեւմտեան կողմը, ստորերկրեայ փոքրիկ մատուռի մը մէջ ամփոփուած, որ շատ կը նմանի Ասորական գետնադամաններուն: Բնական է թէ Եփրեմի մահէն յետոյ իր գերեզմանն ալ միջազգային ուխտատեղի մ'եղաւ Ս. սորւոց եւ Յունաց միջեւ, մինչեւ որ Ժ. դարուն սկիզբը Հայկական զօրաւոր դաշթականութիւն մը Եղեսիոյ հաստատուելով տէր եղաւ շատ մը եկեղեցիներու եւ սլաքավայրերու, որոնց մէջ էր նաեւ Եփրեմի յատուկ սրբատեղին (2): Այս ատենէն ի վեր Եղեսիոյ Հայերը, ամանց խարութիւն զընելու Ասորւոց, միասին յաճախած եւ պատուած են Եկեղեցւոյ այս նշանաւոր Հօր գերեզմանը, սակայն անցնող դարուն վերջերը, հաւանաբար Խոթանասունական թուականներուն, Ասորիք ցեղակցի հպարտութենէն մղուած, ամէն կերպ ստիճգութիւններ ընելով աշխատած են Եփրեմի յատուկ մատուռին հետ Ս. Սարգսի վանքն ալ իւրացնել՝ այսօրուայ Տիգրանակերտի Սակարայիցւոց վանքին տէս Այն ատենի

Ս. Սարգսի վանքին վանահայրերէն Եփրեմ վ. Նարթէնեան, ընդ միշտ վերջ տալու համար Ասորական այս ապօրէն ոտընձգութեանց, անձամբ քանիցս Պոլիս երթալով Պատրիարքարանի միջոցաւ կեդրոնի կառավարութեան մօտ տուեալ հրովարտակներու վրայ ապացուցանելով Եղեսիոյ Հայոց իրաւունքը, նոր հրովարտակով մը դարձեալ հաստատել կուտայ ամբողջ Ս. Սարգսի վանքին Հայոց սեպհականութիւնն ըլլալը, եւ այն ատենէն ի վեր Ասորիք հեռանալով՝ Հայերը Եփրեմի գերեզմանը պարունակող ստորերկրեայ մատուռը կը գոցեն, եւ վանքին եկեղեցւոյն հիւսիս-արեւմտեան անկիւնը, ճիշդ Եփրեմի գերեզմանին վրայ կը կանգնեն փոքրիկ սեղան մը, որուն մէջ տեղը կը բարձրանայ Եփրեմի գերեզմանին մարմարեայ կափարիչը՝ մշտաւառ կանթիկով մը (1):

Այս սեղանը ճարտարարուեստական գեղեցիկ գմբէթով մը իր անձնակրան ծախքով շինել տուած է Եղեսիոյ մեծատուններէն Յովհաննէս աղա Պաղտասարեան: Սեղանին երեք կողմը մոզայիգածեւ սիրուն նկարներ քանդակուած են, իսկ Արեւելեան կողմը կը տեսնուի հետեւեալ յիշատակարանը. «Կառուցաւ գմբէթս ծախիւք Մ. Պաղտասարեան Յովհաննէս աղայի, յաւերժական յիշատակ անուան իւրոյ, 1888 Դեկտ. 1:»

Գ. ԳԱՊՊԷՆՃԵԱՆ

(1) Եփրեմի գերեզմանին ճիշտ զիմացը կը բարձրանայ Եղեսիոյ նախկին Առաջնորդ Խորէն եպիսկ. Մխիթարեանի ճարմարեայ շիրիմը, երկամասկա վանդակով մը:

ՔԵԼԷԿԵԱՆ ՏԻԳՐԱՆ ԽԱՆ, ծանօթ՝ որբախնամ գործին եւ զանազան բարեհալատակ ձեռնարկներու ըրած օժանդակութեամբ, Կ. Պոլիս եկաւ նախընթաց շարժում:

ԼԱՏԻՆ Երթասարդ մը, Ալֆրէտ, անցեալ շարժու Պատրիարքարան դիմելով ընդունեց Հայ եկեղեցին:

Ս. ԷՋՄԻԱՄՆԻ Սինօղը Պոլսոյ հրդեհէն տղէտեալ Հայ ընտանիքներուն 1000 բուբլի նուիրած է:

(1) Այս վանքը 1070ին Հայոց ըլլալը կը հաստատէ Մ. Ուռհայեցի, էջ 236, իսկ 1645ին մեր պատմիչներէն Ա. Դաւրիթեցի իբր նուիրակ էջմիածնէն Եղեսիոյ կուգայ եւ Ս. Սարգիս վանքին մէջ ճաշոց մը գտնելով, անոր յիշատակարանը կ'ընդօրինակէ որուն մէջ Լուսաւորչի Աջը Վիրակոս Վիրապեցի կոթողիկոսին յաճախակ (1441—1443) Սէն էջմիածին փոխարքայիլը կը հաստատուի:

(2) Այս դարուն մէջ իտալիկ Ա. Վաթոպիկոս (972-992) առաջին անգամ ըլլալով Եղեսիոյ Հայոց Առաջնորդ եպիսկոպոս մը կը նշանակէ:

ՊԱՄՓԻԼԻՈՍ ԵՎ ՅՈՒԼԻՈՍ

ԱՌԱՋԻՆ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐՈՒ

ԺԱՄԱՆԱԿՈՒԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ(1)

Գ.

Յուլիոս՝ շարունակելով Վժգոհանքը ամուսնական կեանքէն, ըսաւ.

— Կիսն գոռանք կը պահանջէ ինձմէ երբ յոգնած եմ ես եւ սրտնեղ, եւ կը խուսափի ինձմէ երբ ես տրամադիր եմ գոռանքներս շտալելու։ Եւ արգէն սէրը՝ տեւական ըլլալու համար՝ նորութեան հրապոյրին պէտք ունի։ Այսպէս, օրինակի համար, իմինէս շատ աւելի տգեղ կին մը անկէ շատ աւելի կ'աղղէ իմ վրայ, բայց շատ չանցած անտանելի կը դառնայ։ Քանի մը անգամ զգացած եմ արդէն աւտիկա։ Ո՛չ, անկեղծ ըլլալու համար պէտք է ըսեմ թէ ամուսնութեան մէջ յուսացածս չգտայ։ Փիլիսոփաներն իրաւունք ունին, բարեկամս, կեանքս չի կրնար գահացնել հոգիի բոլոր ձգտումները։ Ասիկա չապացուցաներ, սակայն, աւելցուց Յուլիոս ժպտելով, թէ ձեր խաբէական դրութիւնը կրնայ դարձան տանիլ անոր։

— Ինչո՞ւ խաբէական. հարցուց Պամփիլիոս, ո՛ւրտեղ կը տեսնես խաբէութեան հետքեր։

— Ձեր սխալներն հետեւեալներն են.

— Դուք մարդկային ազգն ազատելու համար կեանքի գործերուն սերտիւ կապուած զԺրախտութիւններէն, բոլորովին կը հրաժարիք այդ գործերէն։ Մարդկութիւնն հմայաթափ չընելու համար, խոյս կուտաք կեանքի բոլոր հմայքներէն. դուք ամուսնութիւնն անգամ չէք ընդունիր։

— Մենք այդ ձեր ըսածներէն ոչ մէկը կ'ընենք, ըսաւ Պամփիլիոս բողբոջելով։

— Եթէ բացարձակապէս չէք ալ մերժեր ամուսնութիւնը, գոնէ չէք ընդունիր փոխադարձ համակրութիւնը, սէրը։

— Համակրութիւնը, սէ՛րը, գոչեց Պամփիլիոս, բայց ատոնք յրիստոնէութեան չէնքին հիմնադրներն են։

— Ուրեմն չեմ հասկնար ձեր ընթացքը քանի որ դուն եւ ձեր մէջէն չատեր, առ մուսնացած չէք։ Ես կը կարծէի որ դուք ամուսնութիւնը չէք ընդունիր, եւ չխցելով հանդերձ արդէն կնքուած միութիւնները, նոր միութիւններ չէք կնքեր։ Ձեր հոգը չէ մարդկային ցեղին շարունակութիւնը. եւ եթէ երկրի վրայ միայն քրիստոնեաներ բնակէին, մարդկութիւնը պիտի դադրէր գոյութիւն ունենալէ։

— Ո՛չ, ըսաւ ճիշդ չէ ատիկա, գոչեց Պամփիլիոս։ Իրաւ է որ մարդկային ցեղին յարատեւութիւնը մեզի համար որպէսզ նպատակ մը չէ, եւ այնքան ալ փոթ չենք ընել այդ մասին, որքան կ'ընեն ձեր կարգ մը իմաստունները։ Մենք այն հաւատքն ունինք որ մեր Հայրը, որ շարունակ կը հսկէ մարդկութեան վրայ, կը հոգայ անսար պէտքերը։ Մեր նպատակն է ապրիլ իր կամքին համաձայն։ Եթէ աւտիկա կ'ուզէ որ մարդկային ցեղը շարունակուի, անոր յարատեւութեան անհրաժեշտ միջոցները պիտի դնէ. ապա թէ ոչ մարդկութիւնը պիտի վերջանայ անխուստիելի կերպով։ Եւ սակայն ատիկա մեզի վերաբերեալ բան մը չէ. մեր պաշտօնն աւելի համեստ է, այն է ապրիլ իր կամքին համաձայն։ Իր կամքը կը յայտնուի մեր բնութեան մէջ, նաեւ այն երկնային յայտնութեան մէջ ուր ըսուած է թէ այրը պէտք է օրէն իր կինը, եւ անոնք երկուքը մէկ մարմին պիտի կազմեն։ Մեր օրէնքներն ոչ միայն չեն արգելիւր ամուսնութիւնը, այլեւ մեր երէցները, որոնք շատ լաւ գիտեն օրէնքը, ազդուօրէն կը քաջալուրեն զայն։ Ձեր եւ մեր ամուսնութիւններուն միջեւ գտնուած մեծ տարբերութիւնը կըրնայ սա կերպով ամփոփուիլ. — Մեր օրէնքը կ'ըսէ բացորոշ կերպով թէ կնոջ մը վրայ ցանկանալու դիտումով նայուածք մը նետելը մեղք է, հետեւապէս մեր կիներն եւ մենք՝ փոխանակ զգայական բաղձանքներ գրգռող միջոցներով՝ ինչպէս արդուզարդ, պճնասիրութիւն, քմիքներ եւն. մեզ դիտողները հշապուրեւելու, ամէն ճիգ ի գործ կը դնենք այդ բաղձանքները զսպելու։ Այնպէս որ այրերու եւ կիներու

(1) Շարունակութիւն 22րդ Թիւէն սկսեալ։

միջեւ գտնուած զգացումները պարկեշտ են՝ ինչպէս քրոջ եւ եղբոր միջեւ Մենք մեր առաքինութեան մէջ կը զօրանանք, որովհետեւ անիկա շատ գերազանց է կընոջ մը համար զգացուած ցանկութենէն, որուն սէր անուշը կուտանք:

— Այս ամէնը շատ լաւ, բայց Յոսէփոս, բայց չէք կրնար ջնջել հաճոյքի եւ համակրութեան զգացումը զոր կը զգանք կատարեալ գեղեցիկ մը տեսնելով: Շատ հեռունիքէն օրինակ մը չվնասուած Վատահեմ որ այն գեղեցիկ աղջիկը, որուն հետ միասին խաղող բերած ես, հակառակ իր ազգատիկ հազուատնորուն, — բոնք այնքան նպատակաւորմար են իր հրապոյրները ծածկելու համար, — քու սրտիդ մէջ սիրոյ զգացումն արթնցուցած է:

— Զեմ կարծեր որ այդպէս ըլլայ, բայց Պամփիլիոս կարմրելով, երբէք իր գեղեցկութեան վրայ չեմ խորհած: Առաջին անգամ ըլլալով դո՛ւն կը խօսիս ինծի ատիկա ինծի համար քոյր մըն է ան. բայց, վերադառնալով ձեր եւ մեր ամուսնութիւններուն միջեւ գտնուած տարբերութեան, ատիկա անկէ առաջ կուգայ որ գեղեցկութիւնը, Աստղիկը պաշտելու պատրուակին տակ, դուք ազատ ասպարէզ կուտաք ձեր զրայական ախորժակին, մինչ մենք՝ ընդհակառակն՝ կը պայքարինք անոր դէմ: Բայց ասիկա կ'ընենք, ոչ թէ զանոնք բոս ինքեան վնասակար գտնելու համար, (որովհետեւ Աստուծոյ ստեղծած ոչ մէկ բանը գէշ չըլլար), այլ որովհետեւ վնասակար կը դառնան, յառաջ բերելով այնպիսի փորձութիւններ զոր պարտականութիւնը չի թողարբեր գոհացնել: Անչնճիգ կը թափենք ատիկէ խոյս տալու: Ահա ա՛յս պատճառով ամուսնացած չեմ տակաւին: Թէեւ ոչ մէկ բան կ'արգիլէ զիս վաղն ամուսնանալու:

— Ո՛վ պիտի որոշէ ընելիք ընտրութիւնը:

— Աստուծոյ կամբք:

— Ի՞նչպէս պիտի դիտնաս ասիկա,

ԼԷՈՆ ԹՈԼՍՏՈՅ

(Շարունակելի)

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ՀԱՒԱՒԱԿԱՆ ԹՎԳՐԻՐԻՆ ՆԿԱՌԱՌՈՒԹԻԱՆ ՀԱՄԱՐ ՎԱՍԿԵՐԱԳՄԱԿԱՆ, ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ԴԱՌԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԸ ՆԿԱՌԱՌՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԸՐԱՅՆԵՐՈՎ, զԵՆՈՒՈՐԱԿԱՆ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ Մէկ քանի կէտերու մասին քայքայութիւն ստանալու համար իւրաքանչիւր Պատրիարքարանէ ներկայացուցիչներ ուղել որոշուած էր: ԴՆ. օր Ա. զգ. Պատրիարքարանի կողմէ Տ. Յովհ. Ս. Եպիսկ. Արշարունի, եւ Տօքթ. Տաղուարեան եւ Ստ. Կուրտիկեան էֆէնդը, եւ Յունաց Պատրիարքարանին եւ Պուլկարաց Եկեղեցարանին կողմէ որոշեալ պատուիրակներ Դատական պաշտօնատուն պնացին: Ներկայ էր միայն Դատական նախարարը, որ ուղեց կարգ մը առաջարկներու մէջ բարեփոխումներ մտայնել կամ ջնջելու Պատուիրակներն ըսին թէ իրենք չեն կրնար ընդունիլ ուրէ յապաւում՝ եղած առաջարկներուն մէջ, եւ անոնց ընդունելութեան պէտքը չենտեսնի: Հայոց կողմէ կը խօսէր Տ. Արշարունի Ս., իսկ Յունաց կողմէ Պուլոս եւ Պուլկարաց կողմէ Տալչէֆ էֆէնդը: Նախարարը յայտարարեց թէ ինք պարտաւորուած է նոր խորհրդակցութիւն կատարելու իր ընկերներուն հետ, եւ ըստ այնմ պատասխանելու: Խորհրդակցութիւնը երկու երեք ժամ տեւեցին, ինկատ առնուելով Պատրիարքարանաց բոլոր առաջարկները, Խորհրդակցութիւնը դարձան կրթական խնդրոյն չուրջ, զորս պիտի մանրամասնենք, երբ վերջնական հանգամանք ստանան: Զինուորագրութեան խնդրոյն գալով, անընդունելի կը դատուի Պատրիարքարաններու առաջարկը թէ՛ զինուորութիւնը չըլնանակներու բաժնուի, եւ իւրաքանչիւր քաղաքի զինուոր տեղւոյն մէջ ծառայէ: Խնդիրը վերջնական հանգամանք չէ առած, եւ հաւանական է որ պատուիրակներն երկրորդ անգամ մ'ալ ներկայանալու հարկին տակ գտնուին:

ԱՏԱՆԱՅԻ որբերուն եւ տղիներուն յատկացուած 10,000 ռսկին շարժուա Ազգ. Պատրիարքարան յանձնուեցաւ՝ հակառակ Հայ-հռոմէականաց Պատրիարքարանին եւ Հայ-հռոմէականաց Ազգապետարանին դիմումներուն, իրան ժողովը սրոշեց շնորհակալութեան դիր դրել, եւ միւս կողմէ նոյն գումարն օսմ. պանքան դնել, ի՞նչ կերպով ծախսուելուն մասին որոշում պիտի տրուի՝ Այրիախնամ եւ Որբախնամ յանձնաժողովներու ներկայութեան:

ԿԱՐԳԱԹՈՂ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐԸ. — Երուսաղէմի միաբաններէն զանազան վանքեր զրկուած երեք վարդապետներէն Ռոտոսդոցի Սարգիս Վ. ճամբան կորցաթող եղած էր: Այս անգամ ալ Կարապետ Վ. Տ. Կարապետեան անհրաժեշտ Պոլիս գալով, իր կարգաթողութիւնն հաղորդեր է Կրօն. ժողովին, որ Դշ. օրուան նիստին մէջ այս երկուքն ալ եկեղեց. ամէն աստիճանէ եւ իրաւունքէ զրկուած համարեց, եւ այս կարգադրութիւնը որոշեց չըջարեալանով հաղորդել ամէն կողմ: Երկուքն ալ արդէն ածիլած են իրենց մօրուքը եւ քաղաքային տարազ հագած:

ՄԻԱՀԱՄՈՒԹ ԲՈՂՈՒԹԻ արտայայտութիւն մը եղաւ Ազգ. ժողովի անցեալ ուրբաթի (Յուլիս 22) նիստը, Պատրիարքարանի սրահին մէջ, Օսման փաշայի գրգռիչ ճափն դէմ, որու վրայ կը խօսէինք անցեալ թիւով: Կարդացուելէ հոք Դիմաքսեան Տ. Հմայեակ Ս. Արքեպի եւ Խոսրովեան Հմայեակ էֆ.ի գլխի, որոնցմով Օսման փաշայի պատժուիլը եւ Տարօնի Հայոց յուսահատական կացութեան դարման եւ սպանովութիւն կը պահանջուէր, խօսք առին կարգով Հմ. Խոսրովեան էֆ., Տ. Հմայեակ Ս. Արք. Դիմաքսեան, Ա. Վոսմեան էֆ., Հմայեակ Արամեան էֆ., Տ. Գրիգորիս Մ. Վ., Պալաքեան, Վահան էֆ. Թէքէլեան Յր. էֆ. Զանկիւլեան, Յակոբ էֆ. Պահրի, Տ. Գնէլ Մ. Վ. Գալէմբեարեան եւ սրիչ Իրիսփոխաններ, որոնք պարզեցին իր գրգռիչ ճառով հռչակաւոր դարձած միւշիւրին խօսքերուն բովանդակ անհիթեթութիւնը, եւ անաբեկ, վրդովեալ վիճակը որուն

մասնուած է Մշոյ Հայութիւնը, Հուսկ ուրեմն ժողովը միաձայնութեամբ ընդունեց զազարի միջոցին խմբագրուած հետեւեալ բանաձեւը. —

«Ազգ. ժողովը իր բռնեցաւ եւ յուզուել կը յայտնէ Դ. զօրաբանակի ընդհ. ֆենիչ միւշիւր Օսման փաշայի կողմէ վերջերս Խապիւղի մէջ Հայերուն եւ Բուրդերուն ներկայութեան արտասանուած Օսմ. զանազան սարերն իրարու դէմ գրգռող՝ մասնաւորաբար Հայոց հաւար յոյժ վսակաւոր խօսքերուն առթիւ, եւ վստահ է թէ Օսմ. սահմանադրական կառավարութիւնը, զնահասելով բոլոր Օսմ. Հայոց այս արդարացի յուզումը, պիտի փութայ հրապարակաւ մերժել եւ դիմապահել Օսման փաշայի արտայայտած այս գաղափարները, ի գործ դնելով այս մասին օրինական տրամադրութիւնները:»

* Անցեալ շաբթու Ազգ. ժողովոյ նիստէն առաջ Դաւաղեան նախարարութեան մատուցուած էր արդէն Պատրիարքարանի բողոքի թագրերը՝ միասին հաղորդուելով նաեւ բանախօսութեան թարգմանութիւնը: Նախարարին վրայ շատ աննպաստ տպաւորութիւն թողած են միւշիւրին գրգռիչ խօսքերը: Պատերազմական նախարարն ալ բոլորովին օրէնքի հակառակ նկատելով այս կերպ բանախօսութիւն մը, հետապրաւ բացառութիւն պահանջած է:

Վերջին լուրերու նայելով, Օսման փաշա կը հերքէ գրգռիչ խօսքեր ըրած ըլլալը, ընդունելով հանդերձ որ անձանօթ Հայերու կծու (°) ակնարկութիւններէն բարկանալով, ինք ալ քանի մը վիրաւորիչ խօսքեր ըրեր է: Բայց զանազան ազդեցիկներէ հասած լուրեր, եւ առաջնորդարանէն Պատրիարքարան հասած պաշտօնական տեղեկագիրներ բառական կերպով կը հաստատեն Օսման փաշայի անլուր ճառը: Զրոյց կայ թէ հանգստեան պիտի կոչուի. ամէն պարագայի մէջ պէտք է, գոնէ առժամապէս, զադրեցնել զինքը պաշտօնէ, քննութիւնը լրջօրէն եւ անկողմնակալ կերպով առաջ տանելու համար:

* Զարսանճագի խնդրոյն առթիւ ալ, Ազգ. ժողովոյ նոյն նիստին մէջ Սմբատ

Բխրատ էֆ. գրով մը բացատրութիւն կը պահանջէր անդապահէն, վերջերս Ազա. Տախարսի մէջ եղած հրատարակութեան մը մասին թէ Տեղապահ Ս. Բ. համամիտ է եղբոր ներքին Գործոց նախարարին այն յայտարարութեան թէ Չարսանճագի հոգային հարցը արծարծողը 'Ինչնակցական' ներքին Տեղապահ Ս. Բ. ն պատրաստակամութեան եւ պահանջումին վրայ, նիստը դանդաղի վերածուելէ ետքը, կարգացուցաւ ն. Սրբազնութեան գրաւոր բալլատրագիրը, նաեւ գրուած թափախները եւն., եւ մէկ քանի երեսփոխաններու խօսք առնելէն ետքը, Տեղապահ Ս. Բ. բերանացի եւս հերքեց իրեն վերագրուած խօսքերը, եւ հաստատեց թէ ոչ միայն համամիտ չէ գտնուած ներքին գործոց նախարարին, այլ եւ պաշտպանած է թէ՛ խնդրոյ առարկայ եկեղեցականները, եւ թէ 'Ինչնակցութիւնը' ժողովը Զի դէմ 37 քուէով բաւարար եւ գոհացուցիչ նկատեց արուած բացատրութիւնները:

ԱՆԱՏՈՒԻ կուսակալներուն մէջ ի մօտայ կարեւոր փոփոխութիւններ պիտի ըլլան, կ'ըսեն թուրք թերթերը:

ԱՏԱՆԱՅԻ Գաւառ. Ժողովը գրեթէ միաձայնակութեամբ (26 անդամոց 25ին զօրօքով) վիճակին առաջնորդ ընտրած է Հալէպի Առաջն. տեղապահ Տ. Շահէ Ծ. Վ. Գասպարեանը:

ԳԱԽԱՌՆԵՐՈՒ մէջ անապահովութիւնը մնայուն վիճակ մը ստացած է կարծես: Առեւանգման եւ բռնի իսլամացման լուրեր կը հասնին Բաքերդէն, ուր Քսանդացի Յակոբճանի կինը՝ Սրբունի՝ առեւանգուելով բռնի եւ զինու զօրութեամբ իշիգացի Հոֆըզ պէյի կողմէ, իմամին առեւը կը պահուի եւ հակառակ եղած գիմումներու, ի յանձնուիր: Բռնի իսլամացման փորձ մ'եւս կ'ըլլայ Գառուպայի (Իզմիր) մէջ 14-15 տարեկան Հայ աղջկան մը վրայ, արիւնահեղութիւն պատահելու քիչ մնալով: Խոչտանդումներու, հարստահարութեանց լուրեր կը հասնին նաեւ Պօլուէն եւ ուրիշ ներքին գաւառներէ: Էտրուէի հայ զինուորներն ալ երկար գանգաւորութիւն մ'ուղղած են Պատրիարքա-

րան իրենց անհանդուրժելի վիճակին պատճառաւ, որով «կիրակի օրերն ալ կ'աշխատցուն, մինչ Հրեան իր շաբաթը եւ Յոյնն իր տօնի օրը կը պահէ»:

ՊԱՐՍԿԱՀԱՅԵՐԸ տագնապալի վիճակի մատնուած են, ջարդի սարսափն ենթակայ, մանաւանդ սա միջոցին երբ զանկէց Շահը իր կորուսեալ դահը գտնելու կ'աշխատի: Ազգարարուած է Հայերուն՝ բացարձակապէս չեզոք մնալ: Նոյն ազգարարութիւնն եղած է Թեհրանի Օսմ. դեսպանին կողմէ ալ Օսմ. հպատակներուն եւ սակայն իրենց ջերմ սահմանադրականութեամբ ծանօթ Հայերուն համար գրեթէ բացարձակ անկարելութիւն մ'է չեզոքութիւնը: Այնպէս որ կիժէ Մէհմէտ Ալի Շահ յաղթէ, Պարսկաստանի մէջ հայկական կոտորած մը անխուսափելի ըլլալ կը վախցուի:

ԱՆԻ քաղաքի չըջագիծէն դուրս ալ պեղումներ եւ խուզարկութիւններ կատարել մաղրած է այս տարի Բրօքս Մառ, որ ամսոյս վերջերը պիտի երթայ Գառնի՝ քարէ վիշապներու մալին հետազոտութիւններ կատարելու:

ԿԵՍԱՐԻՈՅ Գաւառ. Վարչութիւնը տեղւոյն առաջն. տեղապահ ընդերը է Տ. Մարտիրոս քհն. Զարգարեանը:

ԲԱՂԷՇԻ առաջնորդ Տ. Սուրէն Ծ. Վ. Գալէման Պատրիարքարան ողջած հեռագրով մը կը գումէ թէ հոգային խընդիրը նոր զոհ մ'ալ ունեցած է, այն է Օսղին գիւղացի Գանձօ, որ սպաննուած է:

Ա.Զ.Գ. ՈՐԲԱՆՈՅԻՆ յատկացուելու համար, Գարակիօզեան Յանձնաժողովին կողմէ չէնք մը գնուած է վերջապէս Շիշլիի կողմը, 6000 սակիի, ինչպէս յայտնի է Պէպէթի մէջ գնուելիք չէնքին սակարկութիւնը չէր յաջողած:

Արտօնատէր ՀՄԱՅԵԱԿ ԲՆՆՅ. ԷՐՍԵՐՃԵԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԻՄԲԱԳԻՐ

ԶԱՐՄԱՅՐ ԲՆՆՅ. ԿԵԶԻՐԵԱՆ

ՏՊԱՐԱՆ Տ. ՏՕՂԱՄԱՆՃԵԱՆ

ԲՄԴԱՊՈԿԵԱՆ ԱՂՋԿԱՆՅԳԻՃ ՍԿԻՏԱՐ

Ամերիկեան աղջկանց Գոլէճը կը բացուի Սեպտ. 14ին: Այս Գոլէճը Թուրքիոյ մէջ միակ հաստատութիւնն է որ կանանց բարձրագոյն կրթութիւն կուտայ: Այս վարժարանին մէջ կ'աւանդուին՝ Գիտութիւնք, Պատմութիւն, Ուսողութիւն, Գրականութիւն, Մանկավարժութիւն, Փիլիսոփայութիւն եւ Լեզուներ:

Գոլէճը չորս տարուան դասընթացք մը ունի: Անդդիներէն չզիտցողներուն դիւրութեան համար մասնաւոր դասարան մը բացուած է այդ լեզուին ուսուցման համար: Սկիւտար Օր. Տայեանի, Ատափազարի աշխատանք վարժարանի եւ ուրիշ համահասարակ հաստատութեանց չընդունաւորները Գոլէճի առաջին կարգը կ'ընդունուին առանց քննութեան:

Գոլէճի նախապատրաստական Բաժինը կը գտնուի Առնաւուտգիւղ, կ'ընդունուին միայն այն աշակերտուհիները որոնք տասը տարեկանէն վեր են:

Դիչերօթիկները պէտք է օր առաջ դիմեն եւ 2 ոսկի աւանդ ձգելով ապահովեն մուտքը առաջիկայ տարուան համար:

Դիմել Տնօրէնութեան Առնաւուտգիւղ ամէն երեքշաբթի օրերը, առտուան ժամը 10—12:

1—5

ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆՔ ՀԱՅ. Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ, բաղմաձայն մշակմամբ Ռ. Ղ.ի — Ա. Տէր ողորմեայք (Արքի Աստուած եւն.) քառաձայն խառն խումբի համար: 30 կոպեկ:

Բ. Հանգստեան (ննջեցելոց կարգի) քառաձայն խառն խումբի համար. 60 կոպեկ:

Հրատարակուած են եւրոպական երկտող նոթագրութեամբ, եւ յարմար են թէ երգելու առանձին խմբամասերու համար, եւ թէ նուագակցելու դաշնակի կամ երգէտի վրայ:

Նոյն հեղինակը հրատարակած է նաեւ՝ Օրհներգ Հայրապետական «Բարէ»,

քանի հրաշափառ» ... քառաձայն խառն խմբի համար: 40 կոպեկ:

Դիմել Մոսկուա. — Moscou, (Russie), Mousicalnaia Torgovlia «P. Urguerison», Neglinniy Proyesd, No. 14:

ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

ԵՐԿՍԵՌ ՎԱՐԺԱՐԱՆ

(ԵՐԿՍԵՐԱՐԵԱՆ ԻՏԱՏԻ)

ԳԻՇԵՐՕԹԻԿ ԵՒ ՅԵՐԵԿԵԱՅ, ՍԿԻՏԱՐ

ՊԱՇՏՈՆԱՊԵՍ ՎԱԿԵՐԱՑՈՒԱԾ ՄԵԱՐԻՑԵՆ

Հաստատութիւններս, որոնց արդիւնքները գնահատուեցան մեծապէս, եւ որոնց վկայականները վաւերացուեցան օրն օրին կրթական նախարարութենէն, ամէնէն մեծ կրօնական եւ թէ իրենց նպատակին կը ծառայեն լիովին, թէ կը սորվեցնեն բոց ի Հայերէնէ, Օսմաներէն, Ֆրանսերէն, Անգլիկերէն եւ Դերմաներէն լեզուները, եւ գիտական եւ իմաստասիրական ուսումները, սալով հայկական ընտիր դաստիարակութիւն մը երկսեռ Հայ պատանիներու, պատրաստելով զանոնք ամէն ասպարէզի եւ համալսարանական ուսման, ձեռամբ 30է աւելի փորձ, հմուտ եւ մասնագէտ ուսուցիչներու:

Ի մօտոյ պիտի բացուի համալսարանական դասարան մը, մանկավարժական, գիտական, առեւտրական եւ լեզուական ճիւղերու Դասն թիւը բաւական պիտի սեպուի բանալու համար առաջին դասարանը վերաբացուի 1 Սեպտ. 12. դասերը պիտի սկսին 5 սեպտեմբեր, Բշ:

Աշակերտաց ընդունելութեան համար դիմել ամէն ուրբաթ, ուղղակի Տնօրէնութեան, աղջկանց վարժարանը, առաւօտէն մինչեւ իրիկուն, ու Գշ. եւ Եշ. օրերը ժամը (Բ. Թ.) 10էն վերջ Սիւմպիւլի խան, Հիմնադիր-Տնօրէնին դասագիրքերուն եւ բառարաններուն կեդրոնատեղին:

Հիմնադիր-Տնօրէն

ՊԵՏՐՈՍ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

5—3

ՍՏՍՑՈՒԱԾ ԳԻՐՔԵՐ

ԺԻՐԱՅՐ. — Յեղափոխական առաջնա-
շին կենսագրութիւնը (1881-1884), Տ.
Գեորգ Ծ. Վ. Ասլանեան, Ռոստոմոյի ե-
ռանդուն առաջնորդը, իր նկարագրի եւ
զգացուն ժճով պատկերացում է կեան-
քը յեղափոխական առաքելութիւն, իր ամէն
կողմերով, մանկութենէն տկանալ: Գործը
գարգարում է բազմաթիւ պատկերներով,
որոնք կը ներկայացնեն Ժիրայրը, իր ըն-
տանեկան պարտականքը, Մուքատը, իր
ուսուցիչները, քաղաքներն ուր ծնած, տա-
րած ու գործած է, եւն: Երկրորդ հատո-
րով մը հեղինակը առաջադրած է նկա-
րագրել Ժիրայրի գործունէութիւնը՝ Եր-
զնկայի, Կիլիկիոյ, Կեսարիոյ եւ Անկիւ-
րիոյ եւն: մէջ, մինչեւ իր կախաղան
բարձրանալը: Հրատե. Գրքը ճշման պրա-
տան Գին 600 կէս դր:

ԻՆՆՍՈՒՆ ՎԵՑ. — Հրատարակուե-
ցան Բ. եւ Գ. հատորները Սմբատ Բիւ-
րատ էֆ. Երանցան յուզումնալից եւ հե-
տաքրքրաշարժ վէպին, ուր հայկական
արհաւիրքի կեանքը կը պատկերացուի
Խննդուն եւ Վեց թուականի արիւնտ
օրերուն: Վէպ ըլլալէ շատ աւելի վա-
ւերական պատմութիւնն է սարսափի
շրջանին: Գին իւրաքանչիւր հատորին
6 դր:

**ՆՕԹԵՐ ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԻՆ
ՎՐԱՅ.** — Գահիրէի Առաջնորդարանին
քարտուղար Տեառ Ն. Մ. Աղապարս կա-
րեւոր ծառայութիւն մը կը մատուցանէ
հայ կեանքին, հատորի մը մէջ ամբողջ-
րով Եգիպտոսի պատուական հայ դադու-
թիւն վրայ ասկէ առաջ Եւրոպական հրա-
տարակութեան մը մաս կազմելու համար

գրի տոած նօթերը, ներկայ առթիւ աւելի
ճոխացնելով եւ ամբողջացնելով զանոնք:
Լուրջ աշխատութիւն մը, ուր կը պատ-
կերացուի Եգիպտոս դադութիւն հայերու
կեանքն ու գործունէութիւնը՝ հին դա-
րերէ սկսեալ մինչեւ մեր օրերը: Գին 6
դր: Եգիպտ.

**ՅՈՒՇԱՐՁԱՆ ՈՂԲԱՅԵԱԼ ԱՐՓԻԱՐ
ԱՐՓԻԱՐԵԱՆԻ,** հրատարակուած նոյն
յուշարձանի Գահիրէի գերեզմանատան
մէջ բացման առթիւ, կը պարունակէ
կենսագրական նօթեր եւ քննադատական
գիծեր, եւ նոյն առթիւ արտասանուած
սրտացունց բանախօսութիւնները: Հա-
սոյթը պիտի յատկացուի ողբացեալ գրա-
գէտին գործերուն հրատարակութեանը:
Գին 1 ֆրանք:

«ՄԷՔԹԷՊ ԱՐԳԱՏԱՇԸ». — Ազգ.
գայրոցներու յատուկ գործնական դասա-
գիրք, թուրքերէն ընթերցանութեան,
ուղղագրութեան եւ քերականութեան.
Բ. տպագր. Գրեց Աղեքս. էֆ. Գրքը ճշման
Գին 4 դր:

ԳԵՈՐԳ ՄԵՍՐՈՊ

ՈՒՐ ԱՐՏՈՒ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՁԱՆԱԳՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

(Ամեն կողմէ գնահատուած)

Փռութացէք գնել որովհետեւ կէսէն ա-
ւելին սպառած է արդէն — 254 էջ, 30
պատկեր, մէկ քարտէս, եւն Գին 10 դր.,
3 ու կէս ֆր. 1 բուրլի, կամ կէս տօլար:
5 է աւելի գնողներուն գոհացուցիչ զեղչ:
— Գիմել հեղինակին՝ Ատաբազար, և
Պալիս՝ բոլոր գրավաճառներուն: 6—2

ԳԻՆ 1 ՂՐՈՒՅ

Ցպագր. Տ. ՏՕՂԱՍՄԱՃԵԱՆ

Սուրբան-Հանում Մօշա-Թաշը, Թիւ 16

Կ ՊՈԼԻՍ